լացրին, սակայն հեռու էին բաւարար լինելուց եւ սոսկ առժամանակ դադարեցրին Իլխանութեան տնտեսական քայքայման ու անկման գործընթացը, որը վերսկսուեց 1304 թ. Ղազան խանի մահուանից յետոյ: Իլխանութեան քրիստոնեայ ժողովուրդների, այդ թւում՝ հայերի, տնտեսական վիճակը ոչ միայն չբարելաւուեց, այլեւ Ղազան խանը պետական գանձարանը համալրելու նպատակով անգամ ոչ մահմեդականներից գանձուող ջիզեա կոչուող հարկը վերականգնելու անյաջող փորձ կատարեց: Ինչ վերաբերում է հայկական իշխանութիւններին, ապա դրանց մասնատումը եւ տնտեսական ու ռազմաքաղաքական կարողութիւնների նուազումն աւելի ու աւելի էր զգացւում:

ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՏԱՃԱՐԸ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԹԻԿՈՒՆՔՈՒՄ

Հայկ Յակոբեան

Շնորհիւ հին եւ միջնադարեան Հայաստանի խոր ժառանգականութեան հայ վաղմիջնադարեան մշակոյթը կարեւոր աղբիւրագիտական արժէք ունի հին Հայաստանի պատմութեան տարբեր հարցերը լուսաբանելու համար: Միաժամանակ, Հայաստանի մշակոյթն ամուր յենուած է եղել Հին Արեւելքի գաղափարախօսական հիմքի վրայ, միջնադարեան Հայաստանում այն կիրառուել է որպէս փորձուած ուղեցոյց՝ Մերձաւոր Արեւելքում ի յայտ եկած նոր իրողութիւնները համարժէք ընկալելու եւ զարգացման նոր միտումներում ճիշտ կողմնորոշուելու համար: Ստորեւ քննարկուելու է անտիկ դարաշրջանի Հայաստանի տաճարների մի ուրոյն տիպ[1], որի արձագանքները, ինչպէս կը տեսնենք, պահպանուել են միջնադարեան պատկերագրութեան մէջ: Դիտարկման ներկայացուող միջնադարեան մանրանկարը, որը գիտական շրջանառութեան մէջ է դրուել նշանաւոր հայագէտ Հ. Ղեւոնդ Ալիշանի կողմից[2], այժմ պահւում է Վատիկանում եւ զետեղուած է եղել բիւզանդական հայազգի կայսր Բարսեղ Բ.-ին պատկանող Մենոլոգիայում: Ժ. դարի այս մանրանկարի վրայ պատկերուած է Գրիգոր Լուսաւորիչը: Նրա գլուխը լուսապսակի մէջ է, նա եպիսկոպոսական հանդերձանքով է, կանգնած ինչ-որ մոնումենտալ շէնքի առջեւ: Ըստ Ղ. Ալիշանի՝ մանրանկարի վրայ պատկերուած է Լուսաւորիչը Մեծ Հայքի թագաւոր Տրդատ Գ.-ի արքունիքում, որտեղ կարդում է իր քարոզներից մէկը: Եզակի պատմական արժէք ունի շէնքը, որի առջեւ կանգնած է Լուսաւորիչը (աղ. I, նկ. 1): Արեւելագէտ Կ. Տրեւերի կարծիքով՝ յետին պլանում, հաւանաբար, պատկերուած է հին հայկական պանթէոնի գերագոյն աստուածներից մէկի՝ Միհրի տաճարը, եւ երեւի այս հայ հեթանոսական աստուածութեան դէմ էլ տուեալ դրուագում ուղղուած էր Լուսաւորչի քարոզը: Յայտնի է, որ վաղ միջնադարում ծաւալուող գաղափարական պայքարում Միհրի պաշտամունքի դէմ ուղղուած գործերով էին հանդէս գալիս հայ փիլիսոփայ Եզնիկ Կողբացին եւ պատմիչ Եղիշէն[3]:

Լուսաւորչի եւ մեհեանի պատկերը շրջանառութեան մէջ դրած վերոյիշեալ գիտականները պարզ պատճառներով «Միհրի տաճարը» չեն ենթարկել աւելի մանրամասն վերլուծութեան՝ տրամադրութեան տակ չունենալով որեւէ տեղական հնագիտական զուգահեռ: Դեռեւս մեզանից երեք տասնամեակ առաջ յայտնի կամ աւելի ճիշտ՝ հասու չէր անտիկ Հայաստանի որեւէ պաշտամունքային շէնք, բացառութեամբ Գառնիի տաճարի: Նշանաւոր գիտնական Գ. Ա. Տիրացեանը գրում էր հետեւեալը. «Թէեւ Արմաւիրի պեղումները շարունակւում են արդէն 20 տարի, այս-

1 Նախկինում արդէն ներկայացրել ենք հին Հայաստանի սիւնազարդ դահլիճներին նուիրուած մի աշխատանք. տե՛ս Հայկ Յակոբեան, *Հին Հայաստանի սիւնազարդ դահլիճները եւ Հողմիկի տաճարական համալիրը*,- Հին Հայաստանի պատմութեան եւ մշակոյթի հարցեր, Գէորգ Տիրացեանի յիշատակին նուիրուած գիտաժողովի զեկուցումներ, Երեւան, 2001, էջ 49-56:

2 Հ. Ղ. Ալիշան, *Այրարատ*, Վենետիկ, 1890, նկ.՝ 440-րդ էջին կից:

3 Եզնիկ Կողբացի, *Եղծ աղանդոց*, Թիֆլիս, 1912. Եղիշէի *Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին*, աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեանի, Երեւան, 1957. **К. В. Тревер**, *Очерки по истории культуры древней Армении (II в. До н.э. – I в. н.э.)*, М.-Л., 1953, с. 65:

© National Library of Armenia

տեղ չի գտնուել հելլենիստական տիպի ոչ մի մոնումենտալ շէնք, բայց փոխարէնը անընդհատ հանդիպում են յետուրարտական դարաշրջանում ուրարտական շէնքերի եւ պաշտպանական կառոյցների օգտագործման հետքեր, որոշ դէպքերում՝ ոչ մեծ վերակառուցումներով: Արտաշատի միջնաբերդն իր տեսքով աւելի համասեռ է, բայց այստեղ էլ քիչ են վառ արտայայտուած հելլէնիստական կառոյցներ: ... առաւել հաւանական են ամրոցների կառուցման ուրարտական սկզբունքները: ... Առայժմ հելլենիստական ճարտարապետութիւն յիշեցնող ոչինչ չկայ Երուանդաշատում: [Նշուած դարաշրջանում] հելլենիզմի էլեմենտներ իհարկէ կան (թատրոնները, Արշամաշատի միջնաբերդի պատերը, ծիծեռնակապոչ կապերը): Միւս կողմից, պարտադիր չէր, որ գրաւոր աղբիւրներից յայտնի Հայաստանի քաղաքներում գոյութիւն ունեցած տաճարները լինէին հելլենիստական տիպի»[4]: Երկար ժամանակ, համաձայն նոյն ուսումնասիրողի, Գառնիի տաճարն անտիկ տիպի տաճարների միակ նմուշն էր համարւում Հայաստանում: Հռիփսիմէի եկեղեցու հիմքերում Գառնիի տաճարին յար եւ նման զարդերով քարի խորանարդների գիւտը ենթադրում է Հռիփսիմէի եկեղեցու տեղում կամ կողքին միւս յունա-հռոմէական յօրինուածքի տաճարի գոյութիւնը: Վերջապէս, այս տիպի երրորդ շէնքը երեւի կար Բագարանում: Միանաւ եկեղեցու երկայնական պատերի որմնասիւներն այստեղ պսակուած են կորնթոսեան խոյակներով: Ն. Մ. Տոկարսկին ենթադրել է, որ այս խոյակները պատկանել են տեղում մինչեւ քրիստոնէութեան հաստատումը եղած հեթանոսական մի տաճարի, որը յետագայում վեր է ածուել եկեղեցու կամ էլ խոյակները այստեղ են բերուել մի ուրիշ աւերուած շէնքից[5]:

Գ. Ա. Տիրացեանը շարունակում է. «Գիտնականները գնալով աւելի են համոզւում, որ Արեւի, Լուսնի եւ արքայական նախնիների տաճարը Արմաւիրում առաջացել է ուրարտական տաճարի անշան վերակառուցումների արդիւնքում, որը կանգնած էր Արմաւիրի բլրի գագաթին: Անահիտի տաճարը Արտաշատում կարող էր արդէն կառուցուելու պահին ունենալ տեղական յօրինուածք: Ագաթանգեղոսի տեղեկութիւնները տաճարի փայտի մասերը այրուելու վերաբերեալ, կարծես թէ մատնանշում են նրա հնարաւոր նմանութիւնը նոյն Անահիտի տաճարի հետ «Թագուհու դաշտում»՝ Դեղոպլիս Մինդորիում (Արեւելեան Վրաստան), որի փայտէ ծածկը կիսաայրուած վիճակում գտնուել է յատակին: Տեղական ձեւեր կարող էր ունենալ նաեւ սրբարանը, որը կանգնած էր ապագայ Տիգրանակերտի տեղում»: Գ. Տիրացեանը սրանով կատարում է հարցադրում, թէ իրականում ի՞նչ էր իրենից ներկայացնում հին հայկական տաճարը, իսկ աւելի լայն առումով՝ մշակոյթը՝ «սինթե՞զ, թէ՞ յունական մշակոյթի ազդեցութիւն հայկականի վրայ»[6]: Ներ-

4 **Г. А. Тирацян**, *Культура древней Армении*, Ереван, 1988, с. 100.

5 **Н. М. Токарский**, *Архитектура древней Армении*, Ереван, 1964, с. 36-37.

6 **Г. А. Тирацян**, *Культура древней Армении*, Ереван, 1988, с. 101. Խնդրի վերաբերեալ ուշագրաւ է նաեւ Նեմրութ դաղի հիերոթեզէյոնի արեւելեան հարթակը՝ որի ճակատային մասում՝ բլրի ստորոտին, կանգնեցուած էին Անտիոքոս Ա. Կոմմագենցի արքայի եւ Կոմմագենէի պանթէոնի չորս գերագոյն աստուածների վիթխարի արձանները, իսկ նրանց շարքի նկատմամբ ուղիղ անկեան տակ կառուցուած են երկու հանդիպակաց պատեր՝ կազմուած լինելով իրար միացուած բարձր ռելիեֆներից, որոնք ներկայացնում էին Անտիոքոսի հայրական եւ մայրական գծով նախնիների պատկերները: Հինգ արձանների եւ ռելիեֆ պատերի միջեւ գոյացած հրապարակում գտնուող աստիճանաձեւ բուրգ յիշեցնող հիմքի վրայ կանգնեցուած էր կրակի սրբարանը:

կայումս խնդիրը հնարաւոր է դառնում շահեկանօրէն համադրել նոր հնագիտական նիւթի հետ:

Առաջին հայեացքից Ժ. դ. բարձունքից դիտող մանրանկարչին Ք. յ. Դ. դարի Հայաստանի պատմական իրողութիւնները, մասնաւորապէս՝ քրիստոնէութեան ընդունումը որպէս Մեծ Հայքի պետական կրօն, առաւել եւս՝ արդէն վաղուց անէացած հեթանոսական շէնքերը, պէտք է խիստ մշուշոտ ներկայանային, եւ մանրանկարի մէջ հեռաւոր ժամանակների մանրամասները գերազանցապէս պէտք է վերականգնուէին նկարչի երեւակայութեան շնորհիւ: Այս դիրքորոշումն ամրապնդելու կամ հերքելու համար հարկ կը լինի դիմել Մերձաւոր Արեւելքի Թ.-Ժ. դդ. մշակոյթին եւ որոնել այն ճարտարապետական յօրինուածքները, որոնք կարող էին իրենց ժամանակակից մանրանկարչի համար հեթանոսական շէնքի օրինակ լինել: Պարզւում է, որ յիշեալ մանրանկարում պատկերուած կառոյցի տիպի մոնումենտալ պաշտամունքային կամ պալատական շէնքերը բնորոշ չէին Փոքր Ասիայի, Սիրիայի, Միջագետքի, Իրանի կամ Հայաստանի ճարտարապետութեանը Բարսեղ Բ.-ի գահակալութեան շրջանում: Խօսքը երկու կողմից առաջացած՝ դէմքով մեզ նայող գլխաւոր կառոյցի նկատմամբ ուղիղ անկիւն կազմող կցակառոյցներ ունեցող ճարտարապետական յօրինուածքի, ինչպէս եւ նրան բնորոշ դեկորի մասին է:

Քրիստոնեայ Արեւելքի հարուստ ժառանգութեան մէջ որոնուող շինութիւններ եթէ անգամ հանդիպում են, ապա նրանց կողային կառոյցները երկյարկանի կամ եռայարկ աշտարակներ են, որոնք եզերում են եռանաւ բազիլիկ շէնքերի արեւմտեան ճակատը եւ շատ հեռաւոր նմանութիւն ունեն մենոլոգիայի մանրանկարում պատկերուած «հայկական» շէնքին: Այսպիսի բացառիկ շէնքերից են Սիրիայում Ռուբեհայի,[7] Քալբ-Լոզի[8] եւ Թուրմանինի[9] մոնումենտալ բազիլիկները: Բոլոր օրինակներում էլ ներկայացուած են նարտեքսից վեր բարձրացող աստիճանաւոր աշտարակներ: Այս խմբին է յարում նաեւ Արեւելեան Հայաստանում գտնուող Երերոյքի վաղքրիստոնէական տաճարը՝ չորս անկիւնային աշտարակներով[10]: Այսպիսով՝ եթէ անգամ մանրանկարում պատկերուածի նման շէնքեր եղել են Ք. յ. Է.-Ժ. դդ., ապա դրանք որոնուող նմուշի հետ ունեն հեռաւոր նմանութիւն:

Հարցի մէջ աւելի խորանալիս կարելի է ենթադրել, որ մանրանկարիչը պատճէնահանել է իր ձեռքն անցած ուշհռոմէական, վաղբիւզանդական ժամանակի որեւէ ձեռագիր, որը ընդունակ էր համարժէք վերարտադրելու տուեալ դարաշրջանում դեռ չկործանուած կամ խուսնացած հեթանոսական շէնքերը: Իսկ նման պատճէնահանումների, ինչպէս յայտնի է, միջնադարում ենթարկուել են բազմաթիւ ձեռագրեր եւ պատկերագրական նիւթեր, քարտէզներ ու ճանապարհացոյցեր:

Իր հերթին, հայ վաղմիջնադարեան պատմագրութեան մէջ Սեբէոսը եւ Խորենացին (Ա,թ) յիշատակում են Մար Աբաս

7 **H. C. Butler**, *Ancient Architecture in Syria*,- Publications of the Princeton University Archaeological Expedition to Syria in 1904-1905 and 1909. Division II, Section A. Southern Syria, Leyden, 1909a, p. 142, Pl. XVI.

8 **M. de Vogüé**, *Syrie centrale. Architecture civile et religieuse du I-er an VII-e siècle*, Paris, 1865-1877, vol. 1, 2, pl. 122-129; **H. C. Butler**, *Architecture and other Arts*,- Publication of American Archaeological Expedition to Syria in 1899-1910, New York, 1903, pt. 2, p. 221; **G. Tchalenko**, *La Massif du Bélus à l'époque romain*, Paris, 1955, vol. 2, pl. Xi, 2, CVIII; **А. Л. Якобсон**, *Закономерности в развитии раннесредневековой Архитектуры*. Л., 1983, с. վ88.

9 **H. C. Butler**, *Churches in Syria IV to VII Centuries*, Princeton, 1929, p. 197.

10 **Н. Я. Мар**р, *Ереруйская базилика. Армянский храм V-VI вв. В окрестностях Ани*. Ереван, 1968.

© National Library of Armenia

Կատինա անունով մի ասորի հեղինակի, որն ապրել է հարաւային Հայաստանում: Նա օգտուել է հին Հայաստանի մասին գրուած յունարէն ձեռագրից եւ թերեւս՝ հայոց արքունի դիւաններից: Այստեղ կան պարթեւ Արշակունիների պատմութեան որոշ դրուագներ եւ հայ Արշակունիների սկզբնաշրջանին վերաբերող տեղեկութիւններ[11]:

Գրիգոր Լուսաւորիչը արդէն Ե. դարից սրբացուած էր Մերձաւոր Արեւելքում, մասնաւորապէս՝ Փոքր Ասիայում: Սրա մասին է վկայում, օրինակ, հին Սեբաստէից մի եկեղեցու պեղումների ժամանակ գտնուած սրբապատկերը (իկոնոստաս)՝ ընդելուզուած գունաւոր ապակիով եւ արձանագրուած ի պատիւ Գրիգոր Լուսաւորչի. "ἅγιος Γρεγόριος τῆς Μεγάλης Ἀρμενία": Հնագիտական այս յայտնագործութիւնը թուագրւում է Դ.-Ե. դարերով[12]:

Այս հարթութեան վրայ նիւթը քննարկելիս նախ եւ առաջ անհրաժեշտ է նկարագրել եւ վերլուծել մանրանկարում պատկերուած շինութիւնը: Ընդ որում՝ այստեղ կարեւոր են ինչպէս շէնքի ընդհանուր յօրինուածքը, այնպէս էլ՝ մանրամասները: Հարկ է նշել, որ յիշեալ Մենոլոգիայում առկայ են նաեւ այլ մանրանկարներ. չնայած՝ նրանց մեծամասնութեան հեղինակները անյայտ են, դրանք ունեն որոշակի ընդհանրութիւններ: Հետեւաբար՝ մի ժողովածոյի մէջ հաւաքուած մանրանկարների հիմնական բովանդակութիւնն ու կատարման սկզբունքները հասկանալու համար անհրաժեշտ է գոնէ համառօտ անդրադառնալ սրանց: Ամենացայտուն ընդհանրութիւնը Մենոլոգիայի մանրանկարներում նրանց յօրինուածքն է: Որպէս կանոն, կենտրոնում պատկերուած է սուրբը կամ հրեշտակը, որոշ օրինակներում էլ՝ Քրիստոսը, իսկ կենտրոնական կերպարի նկատմամբ հաւասարաչափ հեռացած կողմերը խիստ հաւասարակշռուած են ընապատկերների, մարդկանց եւ զանազան կառոյցների միջոցով: Այս ընդհանուր ատաղձի մէջ նկարներն իրար համեմատելիս տեսանելի են զգալի տարբերութիւններ, նկատելի է յօրինուածքի զարգացում ընութեան պատկերներից մինչեւ մոնումենտալ կառոյցներ: Այսպէս, մեր կողմից առանձնացրած առաջին խմբում ընդգրկուած մի մանրանկարում Միքայէլ հրեշտակապետն է, նրանից աջ եւ ձախ երկու սրածայր լեռներ են, որոնցից ներքեւ են գահավիժում դեւերը (աղ. II, նկ. 1): Երկրորդ մանրանկարում (Կոստանդնուպոլիս, 985 թ.) օրանտի դիրքով կանգնած Մարտինոս պապն է (աղ. II, նկ. 2), կրկին երկու կողմից լեռներ, սակայն ձախից նկարուած լեռը խիստ փոքրացուած է, գրեթէ անհասկանալի է, եւ նրա մօտ երկաթի դռներով ու կլոր յօրինուածքով մի բարձր բերդ է: Երկրորդ խմբում կրկին աջից եւ ձախից երկու լեռներ են, իսկ կենտրոնում գլխաւոր կերպարն է. մի դէպքում՝ անկիւնային աշտարակներով ամրոցից գլխիվայր կախուած նահատակ Փիլիպոս առաքեալն է, երկու զինուոր դէպի աջ եւ ձախ են ձգում զոյգ աշտարակներից ամրացրած շղթան, որից կախուած է առաքեալը (աղ. II, նկ. 3), միւսում սեան ծայրին բազմած Դանիէլ Սիւնակեացն է: Այս օրինակում զոյգ լեռների ֆոնի առաջ արդէն երեւում են յօրինուածքային կենտրոնի նկատմամբ հաւասարակշռուած կառոյցներ, ձախից աշտարակներով պատնէշ է, իսկ աջից՝ երկթեք տանիքով տնակներ (աղ. II, նկ. 4): Երրորդ խմբում լեռների փոխարէն ներկայացուած են մարդիկ ու կառոյցներ: Սիմէոն Սիւնակեացից աջ ու ձախ երեւում է մի բերդ ու պարսպապատ քաղաք, որի առաջ կանգնած են նրան դիտող մարդիկ (աղ. II, նկ. 5): Իսկ «Ալեքսանդրիայի Եւտրոպիայում» սրերով զինուած երկու զինուորների միջեւ կանգնած է կենտրոնական կերպարը, սրանց ետեւում սիւնակներով զարդարուած մետաղական ցանկապատ է, աջից ու ձախից քառակուսի աշտարակներ են, որոնք ունեն մէկական լուսամուտ (աղ. II, նկ. 6): Չորրորդ խմբում ընդգրկել ենք երեք մանրանկար: Առաջին օրինակում 986 թ. մանրանկարի վրայ, կենտրոնում Քրիստոս Պանտոկրատորն է, նրանից աջ եւ ձախ՝ երկու խմբով կանգնած 15 անձինք: Քրիստոսի ետեւում կամարաւոր գլխաւոր դարպասն է, իսկ նրանից աջ ու ձախ՝ մէկական փոքր մուտք (աղ. III, նկ. 1): Միւս մանրանկարում սիւնաշարի կենտրոնում կանգնած է Թէոդորա Բ.-ն, նրա ետեւում լայն կամարով բացուածք է, իսկ նկարի երկու կողմերում՝ վարագոյրներով ծածկուած տիմպաններ (աղ. III, նկ. 2): Յաջորդ օրինակը քիչ աւելի բարդ է: Գրիգոր Նէոկեսարացին կանգնած է կամարաւոր շէնքի առջեւ, որի երկու ծայրերն ունեն աշտարակներ (աղ. III, նկ. 3): Նոյն յօրինուածքն ունի սիւնաշար սրահով միւս, անորոշ մանրանկարը (աղ. III, նկ. 4): Հինգերորդ խմբում արդէն տեսանելի է որոշակի կառուցուածք ունեցող շինութիւն: Մի մանրանկարի վրայ երեւում է լուսամուտներով երկարուկ շէնքը, լուսամուտների միջեւ կանգնեցուած են որմնամոյթեր. հարթ տանիքով այս շէնքն ունի՝ կենտրոնում մի քանի փոքր, իսկ եզրերին՝ մէկական մեծ քիւերով զարդարուած, քառակուսի աշտարակներ: Այս բոլորի առաջ կենտրոնում կանգնած է Բարսեղ Կեսարացին (աղ. III, նկ. 5): Միւս մանրանկարում Թէոփանս Մարտինիկացին է՝ կայսր Լեւոն Զ. Իմաստունի կինը: Կենտրոնում կանգնած օրանտի դիրքով կայսրուհու ետեւում աշտարակներով եզերուած մի պարիսպ է, իսկ աշտարակների գագաթին՝ պատշգամբներ (աղ. III, նկ. 6): Այս խմբում ընդգրկուած մանրանկարներում՝ կենտրոնում կանգնած կերպարի ետեւում եղած կառոյցները կարելի է նոյնացնել տիպիկ հռոմէական վիլլայի հետ: Այսպիսիք տարածուած էին Հռոմի պրովինցիաներում եւ, օրինակ, Հիւսիսային Աֆրիկայում, արդիւնաւէտ էին թշնամիների յարձակումներից պաշտպանուելու համար: Առաջին յարկին բնորոշ էին խուլ պատեր եւ կեղծ լուսամուտներ, իսկ ամուր պատով ուրուագծուած կալուածքի անկիւններում վեր խոյացող աշտարակներն ունէին շրջապատը հետախուզելու համար արուած ու ճաղերով ամրացուած լուսամուտներ: Նշուած աշտարակների միջեւ՝ երկրորդ յարկի մակարդակի վրայ, բոլոր կողմերից ամբողջ երկայնքով ձգւում էին սենեակները, որոնց առաջ՝ դրսի կողմից տասնեակ կից կամարներով զարդարուած պատշգամբն էր: Աշտարակների միջից բացւում էր մէկական դուռ դէպի նման պատշգամբը: Աշտարակների սուր բրգաձեւ վերջոյթներն ու պատշգամբով սենեակների կտուրները ծածկուած էին կարմրաւուն կղմինդրներով:

Վեցերորդ խմբի մանրանկարներից մէկն էլ ունի նման յօրինուածք: Սակայն Թէոփանոյի նկարի համեմատ այն աւելի է յագեցած մանրամասներով: Կենտրոնում Գրիգոր Դեկապոլսեցին է: Նրա ետեւում մի շէնք է, որի դիմային մասում ականթով զարդարուած բարաւորով սիւնաշար է: Այն կենտրոնում ընդհատուած է, եւ նրանից ներս երեւում է քիչ նահանջած խուլ մի պատ, իսկ շէնքի թեւերին առաջ եկած խորաններ են, որոնք ունեն միանման եւ նոյն չափի կամարաւոր լուսամուտներ ու

11 Մովսիսի Խորենացւոյ *Պատմութիւն Հայոց*, Տփղիս, 1913, Ա.թ. Սեբէոսի եպիսկոպոսի *Պատմութիւն*, Երեւան, 1939, Ա., էջ 2. տե՛ս նաեւ Գ. Սարգսեան, *Մար Աբաս Կատինա*,- Հայկական սովետական հանրագիտարան, հտ. 7, Երեւան, 1981, էջ 295:

12 **N. Firatli**, *Seleçikler (Sebaste)*, 1968,- Recent Archaeological Research in Turkey. Anatolian Studies, 1969, vol. XIX, p. 24; **Айк Акопян**, *Экономические и культурные взаимоотношения Армении с Римом (I в. до н.э. – IV в. н.э.)*, автореферат диссертации на соискание ученой степени кандидата исторических наук, М., 1985, с. 18-19; **Հայկ Յակոբեան**, *Գրիգոր Լուսաւորիչը Փոքր Ասիայում*,- «Քրիստոնեայ Հայաստանը քաղաքակրթութիւնների խաչմերուկ» միջազգային գիտաժողովի զեկուցումների դրոյթներ, Երեւան, 2001, էջ 45-47:

© National Library of Armenia

դռներ: Շէնքի վրայ՝ Գրիգորի ետեւում, կանգնեցուած է մի բազմանկիւն գմբէթ: Շինութեան տանիքը եզերուած է լայն երկրաչափական շղթայով զարդարուած քիւով (աղ. I, նկ. 2):

Այս նոյն խմբի մէջ կարելի է ընդգրկել նաեւ Գրիգոր Լուսաւորչին պատկերող մանրանկարը: Թէեւ սրա ստորին հատուածը մասամբ նման է Գրիգոր Դեկապոլսեցու մանրանկարում երեւացող շէնքին, սակայն Լուսաւորչի օրինակում տեսանելի է մի ամփոփ յօրինուածք ունեցող, բարդ մանրամասներով յագեցած շինութիւն, որով այն զգալիօրէն տարբերւում է վերը բերուած բոլոր օրինակներից: Այսպիսով, ընդհանուր յօրինուածքային մտայղացման պայմաններում, երբ կենտրոնում գտնւում է ամբողջ հասակով պատկերուած անձը, իսկ նրա երկու կողմերում խնամքով հաւասարակշռուած մարդիկ են, կառոյցներ կամ լեռներ, մանրանկարների վրայ տեսանելի են մի կողմից վերացարկուած, իսկ միւսից՝ բաւական երկրային ու ոչ մտացածին պատկերներ: Նկարչի երեւակայութեամբ կարելի էր տեղաշարժել մանրամասները, դրանք քիչ ձեւափոխել, սակայն այս ամէնը յօրինել դատարկ տեղում հնարաւոր չէր լինի: Մեր կարծիքով՝ Մենոլոգիայում հաւաքուած տարբեր ծագում եւ սկզբնաղբիւր ունեցող սիւժէները ենթարկուած են լրացուցիչ մշակման կամ գրուած են որոշակի գեղարուեստական կաղապարի մէջ, որի հետեւանքով էլ բոլորին յատուկ է դարձել ընդհանուր կառուցուածքը, բայց ելակետային տարբեր մանրամասների առկայութեան պայմաններում: Գրիգոր Լուսաւորչի կերպարի ետեւում ներկայացուած նման կուռ յօրինուածքով շէնքն էլ հիմք է տալիս շարունակել նրա իրական նախատիպի որոնումները վաղ միջնադարի կամ էլ Լուսաւորչին ժամանակով շատ աւելի մօտ գտնուող ուշ անտիկ աշխարհի մշակութային դաշտում:

Շէնքը, որի առջեւ կանգնած է Գրիգոր Լուսաւորիչը, երկյարկանի է: Նրա երկու կողմերից ձգուող կառոյցները կամ թեւերը ստեղծում են երեք կողմերից սահմանափակուած մի ներքին (կամ գուցէ՝ թերի ներկայացրած, բայց ճակատից բաց) մի բակ:

Դեկորի եւ ճարտարապետական մանրամասների նկարագրութիւնը՝ Գրիգոր Լուսաւորչի ետեւում պատկերուած տաճարն ունի շատ հետաքրքիր ճարտարապետական մանրամասներ, որոնք զգալի չափով օգնում են շինութիւնը նոյնացնելու եւ թուագրելու հարցում: Տաճարական բակի երկու կողմերում տեսանելի զոյգ սենեակներ կամ աշտարակներ յիշեցնող թեւերը զարդարուած են անկիւնային որմնամոյթերով, որոնք ունեն համակցուած սիւների տեսք: Սիւները պսակուած են կորնթոսեան տիպի խոյակներով եւ նոյնատիպ, կարծես հակառակ շրջուած խոյակ յիշեցնող խարիսխներով: Սեան համանման խոյակները եւ խարիսխները յիշեցնում են համապատասխանաբար վեր ու վար ուղղուած ականթի տերեւներ:

Կողային զոյգ կառոյցները ճակատից զարդարուած են մեկական կամարակերպ վերնամասերով պսակուած խորշերով: Դէպի ներս՝ բակը նայող պատերի մակերեւոյթին եւս տեսանելի են նման խոռոչներ կամ լուսամուտներ:

Շէնքի գլխաւոր մուտքը հաւանաբար կենտրոնում էր եւ նկարի մէջ պէտք է գտնուէր Լուսաւորչից յետ: Առաջին յարկի վերնամասով համատարած ձգւում է երկրաչափական զարդանախշերով ձեւաւորուած գեղեցիկ քիւը, որից վերեւ նոյն պարագծով կառուցուած է շէնքի երկրորդ յարկը: Աջ եւ ձախ թեւերի ճակատային կամարներից վերեւ ցայտուն երեւում են մի ծնկի վրայ յենուած, ձեռքերը գլխի մակարդակին վեր պարզած մէկական մերկ մարդանման էակներ, պայմանական՝ ատլանտներ: Նկատենք նրանց վերջաւորութիւնների իւրայատուկ դիրքը, որ վերարտադրում է կեռխաչ-սուաստիկան՝ արեւի ամենատարածուած խորհրդանիշներից մէկը:

Կենտրոնական մասնաշէնքը ուղիղ անկեան տակ կառուցած կողայիններին միացած է ստորին յարկում եղած որմնամոյթերին յար եւ նման մանրամասներով: Թեւեր կազմող կառոյցների երկրորդ յարկում՝ բակի կողմից, երեւում է ճաղերով ամրացուած մէկական կամարաձեւ լուսամուտ, իսկ գլխաւոր մասնաշէնքի երկրորդ յարկում պէտք է որ լինի երեք լուսամուտ, որոնք, ինչպէս թեւերում, պաշտպանիչ ճողերով բաժանուած են իննական քառակուսիների: Շէնքի ողջ պարագծով վերեւով ձգւում է լայն բուսական պատկերներով քանդակուած միւս քիւ-զարդագօտին:

Հաւանաբար, սխեմատիկ պատկերից դուրս են մնացել որոշ մանրամասներ, որոնց սիմետրիկ դիրքորոշումը կը լինէր լիովին օրինաչափ: Այսպէս, պիլոնների ճակատներին որմնամոյթեր կարող էին լինել միաժամանակ երկու կողմերից, նոյնը պէտք է ենթադրել նաեւ ատլանտներից աջ եւ ձախ: Պիլոնների ճակատային մասում՝ ստորին յարկում եղած խոռոչները, ինչպէս երեւում է, խուլ (կեղծ) լուսամուտներ են՝ արուած հինարեւելեան ճարտարապետութեան ոգով, կենդանացնելու համար շէնքի հարթ մակերեսը. հին Հայաստանում սրա զուգահեռն ունենք, մասնաւորապէս, Արմաւիրի (աղ. V, նկ. 1) եւ Արտաշատի պեղումներից (աղ. IV, նկ. 2):

Նկարում պատկերուած գլխաւոր մասնաշէնքը, կարծես, առաջին յարկից լուսաւորուած է երկու կամ աւելի լուսամուտներով եւ Լուսաւորչից յետ ենթադրուող մուտքով, սակայն իրականում այստեղ եւս յատուկ ծիսական նպատակներով կարող էին կառուցուած լինել խուլ լուսամուտ-խորշեր:

Շէնքի թեւերը յիշեցնում են աշտարակներ, որոնց ներսում, Էրեբունու խալդիին նուիրուած տաճարի կամ վերը յիշուած սիրիական եկեղեցիների օրինակով, ներքին պարագծով կարող էին վեր ձգուել դէպի հարթ տանիք տանող աստիճաններ, թէեւ սա ընդամէնը ենթադրութիւն է: Նրանք կարող էին տրոհուել նաեւ երկույարկանի սենեակների, ինչպէս Երերոյքի տաճարի աշտարակների ներսը եւ Հայաստանի բազմաթիւ եկեղեցիներից յայտնի աւանդատները: Ստորին՝ յարկաբաժան քիւն արուած է բարդ խաչապատկերով, որ մի կողմից նման է մերձաւորարեւելեան միջավայրում յայտնի մի ձեւաւոր պատկերի, օրինակ՝ Միդասի դամբարանի զարդամոտիւին (աղ. IV, նկ. 3) կամ croux grammata-ին, իսկ միւս կողմից՝ յիշեցնում է աւանդական հայկական գորգի խաչազարդերը: Չի ընդգծուած, թէ ինչ են պահում իրենց գլխավերեւում ճակատին պատկերուած ատլանտներ յիշեցնող էակները. հաւանաբար՝ քիւի մաս կազմող մէկական եռատերեւ խոշոր ականթներ, որոնք պայմանականօրէն կարելի է դիտել որպէս սեկտորների բաժանուած կիսաշրջանի որեւէ դրսեւորում (սկաւառակի մասին տե՛ս ստորեւ): Սակայն հնարաւոր է, որ մանրանկարի հեղինակի իմացութիւնը ատլանտների ձեռքերում պահուող առարկայի մասին սպառուած էր կամ գուցէ, նպատակայարմարութիւնից ելնելով, անտեսուած էր՝ փոխարինուելով աւելի չէզոք զարդապատկերով: Այստեղ եւ այլուր առկայ են «3» եւ «9» թուեր, որ գուցէ իրօք ունեցել են սիմուոլիկ նշանակութիւն: Ինքնին ուշագրաւ է յիշեալ էակների պատկերագրական էւոլիւցիան հին Հայաստանում[13]: Ատլանտներին պատկերելը Գառնիի Քրիստոսի դամբարանի ճակատային կողմում պէտք

13 Հայկ Յակոբեան, «Թուխ մանուկներ»-ի պատկերագրութիւնը հին Հայաստանում,- Թուխ մանուկ, Երեւան, 2001, էջ 52-67:

© National Library of Armenia

է որ կապուած լինի տաճարի նշանակութեան հետ, այսինքն՝ այն աստուածութեան, որին էլ տաճարը նուիրուած էր: Անտիկ տիպի Ատլանտի պատկերումը, որն ըստ աւանդութեան պահել էր երկնակամարը, հաւաստուած է Միթրայի տաճարներում, ինչպէս այն ցոյց է տրուած Կիւմոնի աշխատութեան մէջ՝ նուիրուած Միթրայի պաշտամունքին[14]: Գիտնականը նաեւ ցոյց է տուել, որ միթրայական դիցաբանութեան մէջ, հակառակ Աւեստայի դիցաբանութեան, խօսւում է ինչ-որ տիտանի մասին, որն իր ուսին է կրում երկնակամարը[15]:

Ատլանտների մէջ հռոմէական դարաշրջանում տեսանելի էին հայկական Միհրի եւ հռոմէական արեւմուտքի միթրայական տաճարների ռելիեֆներից յայտնի զինուորականների հովանաւոր եւ արեգակնային աստուած Միթրայի ուղեկիցները (աղ. IV, նկ. 4, 5, 6): Նրանք պարզորոշ տեսանելի են նաեւ Ք. յ. Ա. դարի 70-ական թթ. կառուցուած Գառնիի հեթանոսական տաճարի պիլոնների հիմքերում (աղ. V, նկ. 1):

Վերլուծելով Արեւմուտքում յայտնի միթրայական պատկերագրութիւնը՝ գիտնականները եկել են հետեւեալ եզրակացութեան. Միթրայի կողքին ատլանտների առկայութիւնը զանազան քանդակների վրայ օրինաչափ է: Այն ժամանակ, երբ «Միթրա-Հելիոսը» իր կառքով շրջայց էր կատարում երկնակամարով... նոյն ժամանակ ատլանտը պահում էր երկնակամարը, ինչպէս դա անում էր, համաձայն Հեսիոդէսի, յունական տիտաններից մէկը՝ Ատլանտը: Յամենայն դէպս, նա Միթրայի ուղեկիցներից մէկն է, ինչպէս եւ ծերունի Զրուանը, որի արձանը գտնում են Միթրային նուիրուած գրեթէ բոլոր տաճարներում[16]:

Ք. ա. Դ. դ. վերջին Աւգուստինոսը, պախարակելով միթրաիզմը եւ նրան առնչուող մանեքէութիւնը, ծաղրի է ենթարկում «բեռնակիր Ատլանտին» (Atlantum laturarium...), որը «աշխարհի բեռը տանում է իր ուսերի վրայ եւ այն, ծունկը ծալած, պահում է երկու ձեռքերով» (maximum Atlantum mundum ferentem humeris et cum geno flexo brachiis utrimque secus fulcientem)[17]:

Այս տիտանը միթրայական ռելիեֆներում, ինչպէս Միթրայի կեանքին նուիրուած դրուագներում, այնպէս եւ նրա պաշտամունքի տեսարաններում, սովորաբար պատկերուած է ներքեւում՝ ձախ կողմում, եւ նրա պատկերները երիզում են հիմնական սիւժէն (Միթրան դաշոյնով խոցում է ցլին): Երբեմն Ատլանտը պատկերուած է արեւելեան հանդերձանքով, միթրայական սրածայր գլխարկով, իջած մի ծնկի վրայ եւ երկու պարզած ձեռքերով գնդի նմանուող կլոր առարկայ բռնած[18]: Սակայն երբեմն այս նոյն կերպարը պատկերուած է նոյն տեղում՝ միաժամանակ երկու տեսարաններում. ներքեւում՝ ձախ կողմից. մերկ կիսանդրիով ֆիգուրը դիմահայեաց է, վեր պարզած ձեռքերով, ինչ-որ բան բռնած, իսկ նրանից վերեւ՝ երկրորդ տեսարանում, մեկնուած կանացի կերպար է (ըստ Կիւմոնի՝ Երկիրը) եւ նրա կողքին պատկերուած է մարդանման մէկը, որն

14 Fr. Cumont, *Textes et monuments relatives au culte de Mithra*, v. 1, Bruxelles, 1896-1899, p. 90; F. Saxl, *Mithras*, Berlin, 1931; **Կ. Վ. Տրեւեր**, *Очерки по истории культуры древней Армении*, с. 64.

15 Fr. Cumont, նշ. աշխ., էջ 90, 301; **Կ. Վ. Տրեւեր**, *Очерки по истории культуры древней Армении*, с. 64.

16 **Կ. Վ. Տրեւեր**, *Отражение дуалистической концепции зороастризма на памятниках искусства*,- Труды Отдела Востока Гос. Эрмитажа, т. I, Ленинград, 1939; **Կ. Վ. Տրեւեր**, *Очерки по истории культуры древней Армении*, с. 65.

17 Augustinus, *Contra faustum*, XV.5; Fr. Cumont, նշ. աշխ., էջ 90.

18 Fr. Cumont, Op. cit., vol. II, Tab. V; F. Saxl, Op. cit., Tab. 14.

իջել է ծնկի եւ վեր բարձրացրած ձեռքերում բռնել է մի մեծ գունդ[19]:

Կարելի է կարծել, որ նրանց հեռաւոր նախատիպը Վանի թագաւորութեան Արեւի աստուածութիւն Շիւինին է (աղ. V, նկ. 2), որը, ինչպէս յայտնի է ուրարտական դարաշրջանի պատկերագրութիւնից, իր գլխավերեւում պահում էր կիսով չափ ծածկած արեւի սկաւառակը: Շիւինիի այս աւանդական պատկերագրութեան ուշ անտիկ կամ միջնադարեան արձագանք է Երուանդաշատի մերձակայքից յայտնի մի կոթողի վրայ պատկերուած անտրոպոմորֆ էակը (աղ. V, նկ. 3), որն իր գլխավերեւում պահել է երկու գնդաձեւ մարմին: Այս շարքը վաղ միջնադարում շարունակում է քառակող կոթողներից մէկի վրայ արուած Անահիտ աստուածուհու պատկերը (աղ. V, նկ. 4), որը խորհրդանշում էր մահուան եւ վերածննդի գաղափարը[20]: Ի տարբերութիւն Գառնիի տաճարի, Լուսաւորչի մանրանկարի վրայ ատլանտները, տեղադրուած են երկրորդ յարկերում, բայց կրկին եզրային մասում՝ առաջ մղուած դէպի պիլոնների ճակատները: Անտրոպոմորֆ քանդակի նման տեղադրութիւնը շէնքի արտաքին պատին՝ երկրորդ յարկի մակարդակին, առայժմ յայտնի չէ հին Հայաստանի արուեստում: Մանրանկարում ատլանտների չափերը շատ աւելի մեծ են, քան դասական դորիական օրդերի բարձրադիր մետոպները: Այնուամենայնիւ, պէտք է նկատի ունենալ, որ պաշտամունքային շինութեան ներսում երկրորդ յարկի մակարդակին յատուկ խորշերում տեղադրուած մարդաչափ արձաններ են դրուած եղել պարթեւների արքայական տան նախնիների պաշտամունքին նուիրուած կենտրոնի՝ Հին Նիսայի «քառակուսի» եւ «կլոր» դահլիճներում (աղ. V, նկ. 5)[21]:

Թէ ինչ էր գտնւում տաճարի ամենաբարձր մասում՝ կենտրոնում, կարելի է միայն ենթադրել, քանի որ Գրիգոր Լուսաւորիչն իր մարմնով ծածկում է ետեւում գտնուող տանիքի կենտրոնական մասը: Յամենայն դէպս, Ուրարտուի գլխաւոր ծիսական կենտրոնում գտնուող Մուսասիրի տաճարի նմանութեամբ, որի գագաթը պսակում է Խալդիի՝ Միհրի ուրարտական նախատիպերից մէկի խորհրդանիշը (աղ. VI, նկ. 1) եւ Գառնիի տաճարի, որի գագաթին բնորոշ բուսական տերեւազարդ է (աղ. VI, նկ. 2), միջնադարեան մանրանկարից տեսանելի տաճարի գագաթը պէտք է պսակէր այս արեւային աստուածութեան խորհրդանիշներից որեւէ մէկը, օրինակ՝ արեւի թեւաւոր սկաւառակը: Շէնքի տանիքն ինքնին Հայաստանում ունեցել է յատուկ նշանակութիւն, մասնաւորապէս՝ չորս ընդգծուած անկիւններով աշտարակաձեւ կառոյցների գագաթին՝ կենտրոնում, իրականացուել են ծէսեր, պէտք է կարծել, յար եւ նման Պարսից նաւասարդեան ծէսերին[22]:

Մանրանկարում պատկերուած շէնքի արտաքին կողմից տարբեր մակարդակների վրայ որմնասիւներով շրջապատուած խորշերը կրկնում են պարթեւական դարաշրջանի Աշշուր քաղաքի պալատական այուանները, Աշշուր աստուածութեան (աղ. VI, նկ. 3 եւ 4) եւ պերիպտեր կոչուած յունա-միջագետքեան ոճի տաճարների խորշերը: Ուշպարթեւական շրջանի Աշշու-

19 Fr. Cumont, vol. II, Tab. VI; F. Saxl, op. cit., Tab. 15; **Կ. Վ. Տրեւեր**, *Очерки по истории культуры древней Армении*, с. 64-65, табл. 59-61.

20 Գործնականում աւելի ընդարձակ շարք կազմող այս տիպի պատկերների էտլիւցիան ներկայացուած է մեր ուսումնասիրութիւններից մէկում. տե՛ս Հայկ Յակոբեան, *«Թուխ մանուկներ»-ի պատկերագրութիւնը* ..., էջ 52-67:

21 **Գ. Ա. Կոշելենկո**, *Родина парфян*, М., 1977, с. 62, рис. 23.

22 **Ե. Ա. Դորոշենկո**, *Зороастрийцы в Иране* (историко-этнографический очерк), М., 1982, с. 70.

© National Library of Armenia

րի պալատի այուաններից[23] մէկի արտաքին երեսին կենտրոնական դիրք է գրաւում ընդարձակ կամարակապ մուտքը (աղ. VI, նկ. 5): Այուանի կողային մակերեսները վերից վար տրոհուած են երեք բաժիններով. ստորինը զբաղեցնում են յիշեալ մուտքին հարեւանող ցածր դռները՝ եզերուած որմնասիւներով: Յաջորդ երկու յարկերը կրկնում են ստորինի պատկերը, այն տարբերութեամբ, որ դռների փոխարէն առկայ են խուլ խորշեր: Յարկերի բաժանարար են ծառայում գօտիները՝ զարդարուած ծեփածոյ պատկերներով, ուր գերիշխում են երկրաչափական եւ խիստ ոճաւորուած բուսական մոտիւները. նման երեւոյթի զարգացումը կարելի է տեսնել Կտեսիֆոնի սասանեան պալատում (Թակ-ի-Կիսրա)[24]: Մանրանկարի վրայ՝ ներքին բակի հեռաւոր մասում, երեւում է երկու կոյտ: Գուցէ սրանց միջոցով քողարկուած է ինչ-որ հեթանոսական սրբազան մանրամասն. թէեւ բացառուած չէ, որ սա Մենոլոգիայի շատ մանրանկարներում պատկերուած զոյգ լեռների կամ նրանց խիստ փոքրացուած մանրակերտի պատկերն է, ինչպէս տեսանք վերը: Յամենայն դէպս, եթէ այստեղ կանգնեցուած չէին քանդակներ կամ կուռքեր, ապա, ելնելով տարածաշրջանին բնորոշ զուգահեռներից, կարելի է ենթադրել, որ զոյգ հողակոյտերի տեղում՝ տաճարի գլխաւոր մուտքի առաջ, կանգնեցուած էին երկու խոշոր պիլոններ:

Լուսաւորչի թիկունքում պատկերուած շէնքը սերտ ընդհանրութիւններ ունի Հին Արեւելքի եւ անտիկ աշխարհի մի շարք կառոյցների հետ:

Դեռեւս հին քաղաքակրթութիւնների ձեւաւորման նախաշեմին Արեւելքում արդէն տեսանելի էր բնակելի եւ պաշտամունքային համալիրների կազմակերպումը բակի երեք կողմերում: Թել աս Սաւուանում՝ Սամարայի հնագիտական մշակոյթին պատկանող այս բնակավայրի III շերտում (Ք. ա. 5350 թ.) կայ ակնարկ բակի երեք կողմերում շինութիւնների դասաւորման մասին[25]: Սակայն բակը շրջապատող շէնքերը նախապէս դեռ չեն ծրագրուած որպէս մի ընդհանուր համալիրի ներսում ֆունկցիոնալ առումով որոշակի բաժանուած մասեր: Ք. ա. V հազարամեակի բնակելի տունը Հասսունայից (աղ. VII, նկ. 1) աւելի է ընդգծում այս գաղափարը: IV հազարամեակի կէսերին Թեփէ Գաւրայում (աղ. VII, նկ. 2) ձեւաւորւում է տաճարական մի յօրինուածք, որն անփոփոխ է մնում մինչեւ ուրուկեան շրջանի՝ IV հազարամեակի վերջերը: Տաճարն ունէր ուղղանկիւն սրբարան, դէպի ուր կարելի էր ներթափանցել բաց սիւնաշար բակից. սրա երկու կողմից առաջ էին գալիս կողային սենեակների լայնակի պատերի ճակատները[26]:

Ք. ա. 3500 թ. յաջորդած ժամանակաշրջանին վերաբերող Էրիդուի VII շերտի տաճարը (աղ. VII, նկ. 3 եւ 4) զարդարուած էր անկիւնային աշտարակներով: Ընդ որում՝ շէնքը զարգացած էր գլխաւոր մուտքից դէպի աջ եւ ձախ, այսինքն՝ լայնակի առանցքով: Միջինբրոնզեդարեան Նորշուն-Թեփէում (աղ. VII, նկ. 5)՝ Հայկական լեռնաշխարհի հարաւում, արդէն նկատելի է զանազան համալիրների բաշխումը բակի երեք կողմերում: Կարաինդաշ

23 Երեք պատերով, ճակատային կողմից սովորաբար կամարով պսակուած եւ լրիւ բաց մի խորունկ ու ընդարձակ շինութիւն, կոչւում է նաեւ լիւան:

24 **Г. А. Кошеленко**, *Культура Парфии*, М., 1966, с. 139-140, примечание 119, рис. на с. 138.

25 **Сетон Ллойд**, *Археология Месопотамии*, М., 1984, рис. на с. 83.

26 **M. E. L. Mallowan**, *Cambridge Ancient History*, vol. I, pt. 1, Cambridge, 1970; Ch.8: The Development of Cities from Al Ubaid to the end of Uruk V: section 2 – Assyria, p. 382, note 2; **Сетон Ллойд**, նշ. աշխ., էջ 86.

արքայի Ք. ա. ԺԵ. դ. վերաբերող տաճարում՝ Ուրուկ քաղաքում, աշտարակաձեւ շինութեան գլխաւոր երեսն իր հերթին ունի երկու կողմից առաջացած թեւեր[27]:

Քննուող մանրանկարում երեւացող կառոյցին աւելի են մօտենում բիտ-հիլանի (աղ. VII, նկ. 6 եւ 7) կոչուած խեթա-միտանիական տեսակի դասական շէնքերը, որոնք ճակատային կողմից կարող էին ունենալ սիմետրիկ զարգացում՝ պիլոնների, աշտարակաձեւ կառոյցների կամ սենեակների տեսքով: Սակայն մէկ կամ երկու յարկ ունեցող այս շէնքերի առաջնամասի կենտրոնական հատուածը, դատելով վերականգնումներից, առնուած էր ընդհանուր ծածկի տակ, իսկ ճակատից՝ հանդիսաւոր աստիճանների վերին հարթութեան վրայ, երկու-երեք սիւներով ընդգծուած նախասենեակն էր[28]:

Մեր դէպքում բիւզանդական մանրանկարի հեղինակից չի կարելի պահանջել իրականի ճշգրիտ ու մանրամասն պատճէնահանում. օրինակ՝ ներքին բակի առաջ կարող էին լինել աստիճաններ, շէնքն էլ կարող էր կառուցուած լինել բարձր հարթակի վրայ[29], անգամ շրջապատուած լինել պերիստիլ բակով:

Հնագիտական նիւթի ռետրոսպեկտիւ (յետադարձ) դիտարկումը, շարունակում ենք՝ անդրադառնալով Վանի թագաւորութեան տուեալներին: Այս դարաշրջանից յայտնի են շէնքերի կամ նրանց առանձին տարրերի մասին գրաւոր յիշատակութիւններ, ընդ որում՝ մօտ մէկ տասնեակի են հասնում յատուկ տերմինները, որոնցով կոչուած են սրանք: Մասնաւորապէս՝ աղբիւրներում յիշատակուած են. 1) ուղղանկիւն՝ լայնակի զարգացումով շէնքեր, 2) Susi, որն ըստ երեւոյթին, ուղղանկիւն՝ երկայնակի զարգացած շէնք էր ու, հաւանաբար, նոյնական էր É.BÁR.TUR (փոքր տաճար) հասկացութեան տակ միաւորուած շէնքերին, 3) É.BÁR., հաւանաբար, չորս անկիւնային աշտարակներով շէնք էր, 4) Iarani-ն, թերեւս լեռնային տաճար էր՝ ընդարձակ սպասարկող անձնակազմով հանդերձ, 5) KÁ, ^{GIŠ}KÁ, KÁ^{MEŠ}, šeštili տերմինների տակ ենթադրւում է դարպաս կամ համալիր՝ մի քանի տաճարով եւ օժանդակ շէնքերով հանդերձ, 6) pulusi-ն նշանակում էր կոթող՝ ստելա, 7) aši|use-ն՝ սիւնազարդ դահլիճի տեսք ունեցող տաճար. Արգիշտիխինիլիում aši|use-ի տակ կառուցուած էր հացահատիկի շտեմարան[30]: Յայտնի էին նաեւ այլ կառոյցներ, ինչպէս širihani/širišin (որը գուցէ եւ զոհաբերութեան համար նախատեսուած կենդանիների ժամանակաւոր հանգրուան-սենեակ էր)[31], adunisinu: Վանի թագաւորութեան ամենացայտուն կառոյցները ցուցաբերում են զարգացման երեք միտում՝ լայնակի, երկայնակի եւ ուղղանկիւն աշտարակաձեւ: Երկայնակի զարգացումով մի շարք օրինակների կողքին իւրայատուկ տեղ է գրաւում Կարմիր բլուրի շէնքերից մէկը (նկ. 011), որն ընդունուած է կոչել մեգարոնատիպ կառոյց[32]:

Սրանցից առաջինն էլ, լայնակի զարգացող շէնքը, որոշակի կապ ունի քննարկուող մանրանկարի հետ: Այս տեսակի ամենայայտնի շինութիւնը Էրեբունի միջնաբերդում պեղուած եւ պեղուող Խալդիի

27 *Памятники мирового искусства*, т. I, М., 1968, рис. 18.

28 *Архитектура древнего мира*,- Всеобщая история архитектуры: в 12 томах, т. 1, под ред. **О. Х. Халпахчьяна, Е. Д. Квитницкой, В. В. Павлова, А. М. Прибытковой**, М., 1970, с. 244, рис. 30.

29 **R. Ghirshman**, *Terrasses sacrées de Bard-a Nechandeh et Masjid-i Soleiman*,- MDAI, N 45, Paris, 1976.

30 **Ս. Հմայեակեան**, *Վանի թագաւորութեան պետական կրօնը*, Երեւան, 1990, էջ 141-142:

31 *Հայկական ճարտարապետութեան պատմութիւն*, հտ. 1, Երեւան, 1996, էջ 177:

32 Նոյն տեղում, էջ 131-132, նկ. 32, ներքեւում՝ ձախից:

© National Library of Armenia

տաճարն է (աղ. VIII, նկ. 1): Մինչեւ այժմ չի պարզուած նրա նախնական յօրինուածքը: Ըստ Դ. Սթրոնախի՝ բացառուած չէ, որ սկզբում կառուցուած է եղել միայն աշտարակաձեւ շէնքը[33]: Վերականգնումը, որն ընդունուած էր մինչեւ վերջերս (այն է՝ վեց զոյգ սիւներով եւ բաց ճակատով գլխաւոր շինութիւն, նրանից ներս կրկին նման լայնակի զարգացած եւ սիւնասրահին զուգահեռ կառուցուած մի երկարուկ սրահ, սրանցից ձախ՝ քառանկիւն միջանցք եւ նրան ու սիւնասրահին կից աշտարակ), այժմ մեծ կասկածի տակ է առնուած: Ենթադրւում է, որ սկզբնապէս՝ արդէն ուրարտական շրջանում, շէնքն ունէր հինգ կամ վեց շարք վեցական սիւների վրայ յանգչող տանիքով սրահ, որ նախորդել է յետագայում Աքեմենեան Պարսկաստանում առաջացած ապադանաներին[34]: Բոլոր դէպքերում ուշագրաւ է, որ եթէ տաճարի սրահի նկատմամբ աջ եւ ձախ աշտարակաւոր թեւերը տեսականում զարգանային սիմետրիկօրէն, ապա մեր առաջ կը յայտնուէր բիւզանդական մանրանկարին բաւական մօտ մի ճարտարապետական յօրինուածք: Գրիգոր Լուսաւորչի թիկունքում պատկերուած կառոյցը թոյլ է տալիս ենթադրել, որ անտիկ դարաշրջանում կամ անգամ աւելի վաղ Հայաստանում որոշ շէնքեր ճակատային կողմից կարող էին ունենալ նաեւ սիմետրիկ զարգացում՝ պիլոնների, աշտարակաձեւ կառոյցների կամ սենեակների տեսքով՝ այս վերջին դէպքում նմանուելով բիտ-հիլանի խեթա-միտանիական տեսակի դասական շէնքերին: Մեր ձեռագիր նմուշի խիստ պարզեցուած տիպը յիշեցնում է Էրեբունու արտաքին տաճարը՝ գլխաւոր դարպասներից դուրս (աղ. VIII, նկ. 2), միայն թէ նրա երկայնական «անտ»-երի թեւերը կարծես թերզարգացած են: Սրա արձագանքը տեսնում ենք Մցխեթի հարեւանութեամբ՝ Բագինեթում, շատ աւելի ուշ՝ Ք. ա. Բ.-Ա. դդ. (աղ. VIII, նկ. 3), թէեւ այս էլեմենտն արդէն հաստատուն տեղ ունէր յունա-հռոմէական աշխարհի մեգարոնանման յօրինուածք ունեցող բազմաթիւ տաճարներում:

Աքեմենեան դարաշրջանի ճարտարապետութեան մէջ առաւել նկատելի է համալիրների բազմազանութիւնը, որը պէտք է լինէր նախորդ դարաշրջանի ստեղծագործական զարգացման արդիւնք: Մեր խնդրի համար առաւել հետաքրքիր է Պերսեպոլիսի (աղ. VIII, նկ. 4) պալատական-տաճարական կենտրոնը: Մասնաւորապէս՝ գրաւում է երկրորդ շէնքը՝ ապադանան, որն առնուազն երեք կողմից (յամենայն դէպս՝ արեւելքից) ներկայացնում է թեւերում մէկական կառոյց ունեցող եւ լայնակի զարգացած ճակատով յօրինուածք: Այս շէնքից արեւելք գտնուող «Հարիւրսիւնանոց» սրահը եւս ունի լայնակի ճակատ եւ երկու կողմից միմեանց սիմետրիկ կառուցապատուած թեւեր:

Առանձնակի հետաքրքրութիւն է ներկայացնում Աքեմենեան դարաշրջանի Բաբելոնի մոնումենտալ կառոյցներից մէկը (աղ. VIII, նկ. 5): Լայնակի զարգացած այս

33 Սրա մասին անուանի գիտնականը հաղորդել է մեր անձնական զրոյցի ժամանակ:

34 Այս կարծիքին են Էրեբունում պեղումներ կատարող ամերիկեան եւ ֆրանսիական արշաւախմբերի ղեկավարները, նոյն կարծիքին է նաեւ Կ. Ղաֆադարեանը (տե՛ս Կորիւն Ղաֆադարեան, *Էրեբունիի միջնաբերդի բազմասիւն դահլիճի թուագրման հարցի շուրջ*,- «Յուշարձան», տարեգիրք Զ, ԵՊՀ գիտաժողովի նիւթերի ժողովածոյ՝ նուիրուած Բ. Պիոտրովսկու ծննդեան 100 եւ Հո. Ջանփոլադեանի ծննդեան 90-ամեակին, Երեւան, 2010, էջ 121-129): Առաջին անգամ նման կարծիք յայտնել է ճնագէտ Ի. Լոսեւան (տե՛ս **И. М. Лосева,** *Новые археологические исследования отряда ГМИИ им. А. С. Пушкина на холме Арин Берд*,- Советская археология. 1958, N 2, с. 183. տե՛ս նաեւ Հայկ Յակոբեան, *Հին Հայաստանի սիւնազարդ դահլիճները*,- Խալդեան զօրութեամբ. յօդուածների ժողովածոյ՝ նուիրուած Բորիս Պիոտրովսկու 100-ամեակին, Երեւան, 2010, էջ 160-189):

շէնքի գլխաւոր ճակատը նայում է հիւսիս. լայն աստիճաններից վեր՝ բարձր հարթակի վրայ, բուն շինութիւնն է, որի եզրին դրուած երկու սիւներից ներս կառուցուած է լայն ու նեղ նախասրահը՝ աջ ու ձախ խորացած կողային բաժանմունքներով: Նախասենեակից ներս երկու պիլոններով զարդարուած գլխաւոր մուտքն է, որի երեք բացուածքները տանում են ութ սիւներով կենտրոնական սրահը եւ նրան երկու կողմից հարեւանող փոքր սենեակները[35]: Մեր նպատակը երեք կողմից բակն ընդգրկող բոլոր հնարաւոր յօրինուածքների ակնարկը չէ, առաւել եւս՝ Մերձաւոր Արեւելքից դուրս գտնուածներինը: Բացառիկ դէպքերում, այնուամենայնիւ, սրանք տեղին է ամրագրել: Օրինակ՝ նման պատկեր ենք տեսնում Աթենքի միջնաբերդում՝ ակրոպոլիսում, մուտքից քիչ հեռու՝ բարձունքի հարաւարեւմտեան եզրին. սա Բրաուրանիա-Արտեմիսի եռամաս տաճարն է, որը կարող էր եւ աղերսներ ունենալ - մերձաւորարեւելեան նմանատիպ օրինակների հետ: Այստեղ սիւնաշար երկար ճակատով գլխաւոր սրահին երկու կողմից կցակառուցուած է փոխուղղահայեաց եւ ճակատի հարթութեան համեմատ զգալի առաջացած մէկական սենեակ:

Եթէ մանրանկարից երեւացող տաճարական շէնքը հարցադրում է մի խնդիր, թէ ինչպիսին էր հին հայկական տաճարների մի տեսակի արտաքինը, ապա միւս խնդիրը վերաբերում է նման շէնքերի բարձրութեանը, այլ կերպ ասած՝ յարկերի քանակին: Աքեմենեան դարաշրջանի Հայաստանի տաճարական շէնքերի ուշագրաւ մի տեսակ էլ հնարաւոր է դառնում վերականգնել Ենոքաւանից՝ (աղ. VIII, նկ. 6) տաճարական մի շէնքի պեղումներից գտնուած երկյարկանի տաճարի մանրակերտի շնորհիւ. երկթեք տանիքով բազիլիկ տիպի շէնքը, դատելով մոդելից, շրջապատուած էր կլոր յատակագծով բարձր ցանկապատով՝ կազմելով սրբազան տարածք՝ տեմենոս[36]: Ընդ որում՝ այս եւ ստորեւ յիշատակելի հնավայրերում երկյարկանի տաճարների գոյութեան փաստը համահունչ է քննուող մանրանկարի շէնքին:

Վաղ հելլենիստական շրջանում տարածաշրջանին բնորոշ էր ներքին բակի ֆունկցիոնալ մասերի բաշխման բազմազանութիւն: Սրա մասին ուշագրաւ փաստեր կան Կուրի աջափնեակում՝ պատմական Հայաստանի տարածքում, պեղուած Ցիխիա-գորա համալիրում (աղ. VIII, նկ. 7): Բերուած օրինակում ներքին բակում կանգնեցուած պիլոնի եւ գլխաւոր դիրք գրաւող քառակուսի սրբարանի երկու թեւերում ոչ թէ առաջ եկած շինութիւններ ենք տեսնում, այլ, ընդհակառակը, ներս ընկած բացօթեայ հատուածներ: Սակայն աւելի հետաքրքիր է այս յուշարձանի արեւելեան թեւը, ուր հարաւային՝ գլխաւոր շէնքը (№ 6) երեք կողմից՝ կողքերից եւ դիմացից, սիմետրիկօրէն շրջապատուած է կառոյցներով (№№ 3-5, 7-9). սրանցից մէկը (№ 4)՝ բացօթեայ կամ ծածկուած կառոյցը, գլխաւորի համար ծառայում էր որպէս իւրայատուկ նախասրահ[37]:

Հելլենիստական ժամանակաշրջանի Մերձաւոր Արեւելքում գնալով աւելանում է տաճարական շէնքերի յօրինուածքների բազմազանութիւնը՝ ներկայացնելով տարբերակներ՝ մասամբ նման բիւզանդական

35 Roman Ghirshman, *Iran. Protoiranier, Meder, Achäemeniden*, München, 1964, s. 224, ab. 274.

36 **С. А. Есаян**, *Астхиблурский могильник*,- Вестник Общественных наук, 1968, N 6, с. 96; **С. А. Есаян**, *Культура племен северо-восточной Армении (III-I тыс. до н.э.)*, Ереван, 1976, с. 43, рис. 29.

37 **Г. Г. Цкитишвили**, *Результаты работ на Цихна-гора (1971-1974 гг.)*,- Краткие сообщения института археологии (КСИА), М., 1977, N 151, с. 87-93, рис. 1; *Древнейшие государства Кавказа и Средней Азии*,- Археология СССР, т. 8, М., 1985, с. 82, табл. XL.B на с. 154.

© National Library of Armenia

մանրանկարում ներկայացուած շէնքին: Սրա օրինակներից մէկը Ք. ա. Բ. դ. Պերգամոնում կառուցուած Զեւսի նշանաւոր զոհասեղանն է (աղ. VIII, նկ. 8): Այստեղ շէնքի երկու առաջ քաշուած թեւերը եւ հիմնական մասնաշէնքը դրսից եւ ներսից շրջապատուած են սիւնաշարերով, իսկ արտաքին բակը զբաղեցնում է լայն աստիճանաշարը, որը տանում է դէպի կենտրոնական մուտքը:

Նոյն դարաշրջանում՝ Ք. ա. Բ.-Ա. դդ. Արեւելեան Վրաստանում՝ «Թագուհու դաշտում», կառուցուած Անահիտի տաճարի հարաւային շէնքը (աղ. IX, նկ. 1) քննուող մանրանկարի շէնքից տարբերւում է նրանով, որ բակի փոխարէն տեսնում ենք չորս սիւներով ծածկի տակ առնուած ընդարձակ նախասենեակ: Ընդ որում՝ այս սենեակը երկու կողմից շրջապատած սրահները հարաւից ունեն խուլ պատեր, ինչպէս մանրանկարի վրայ: Դիտարկման է արժանի նաեւ Անահիտի նոյն տաճարական համալիրի արեւելեան շէնքը, մասնաւորապէս՝ նրա արեւելեան ճակատը, որը զգալի ընդհանրութիւններ ունի Գրիգոր Լուսաւորչի թիկունքում պատկերուած շէնքի յօրինուածքի հետ[38]:

Նոյն մերձաւորարեւելեան տարածաշրջանում պաշտամունքային եւ աշխարհիկ ճարտարապետութիւնը բաւական արագ էր զարգանում նաեւ անտիկ դարաշրջանի Միջագետքում: Ք. ա. Բ. դ. սկզբին պատկանող Ուրուկի տաճարներից մէկը՝ նուիրուած Անուին եւ Անտումին (աղ. IX, նկ. 2), ունի տիպիկ միջագետքեան յօրինուածք՝ արտաքին դռան հետ մի առանցքի վրայ կանգնած զոհասեղան եւ աստուածութեանը նուիրուած արձան՝ որմնախորշի մէջ՝ նուիրատուութեան սեղանի առաջ: Տաճարի մուտքը բացւում է հիւսիս-արեւելքից, ինչը կրկին բնորոշ գիծ է Միջագետքի համար: Շէնքի ճակատային այս մասում, չնայած երկայնակի զարգացմանը, երկու կողմերից կառուցուած են կողային շինութիւններ[39]:

Անտիկ դարաշրջանի Աշշուրում առանձնանում է երկու շէնք: Առաջինը Աշշուր աստծոյ տաճարն է (աղ. VI, նկ. 3 եւ 4 ձախից): Երկյարկանի այս շէնքն ունի հանդիսաւոր աստիճաններով զարդարուած կենտրոնական այուան, որը բաց է մի կողմից՝ այսպիսով փոխարինելով բակին, եւ ունի երկու կողային աւելի ցածր կամարներով այուաններ: Կրկին գլխաւոր շէնքը՝ այուանը, գտնւում է գլխաւոր դարպասների դիմաց:

Աշշուրի միւս տաճարը, այսպէս կոչուած, «պերիպտերն» է (աղ. VI, նկ. 4 աջից)՝ կանգնած յիշեալ շէնքի նկատմամբ ուղիղ անկեան տակ: Նրա այուանից դէպի ներս կառուցուած են տիպիկ մեգարոն յիշեցնող նախասրահը եւ բուն նաոսը: Այս եռամաս առանցքը երկու կողմից շրջապատուած է մէկական սրահով: Արտաքուստ երկու շէնքերն էլ զարդարուած են որմնասիւներով, ինչով շատ նման են մանրանկարի շէնքին[40]:

Բացառուած չէ, որ մանրանկարում ներկայացուած շինութիւնն ունէր սիւնաշար ճակատ, ինչպէս Դուրա-Եւրոպոսի ուշսելեւկեան ժամանակաշրջանի միջնաբերդի պալատի ներքին բակը, կամ էլ յիշեալ պերիպտերը (հարթակի խորունկ մուտք՝ զարդարուած սեան կրկնակի բարձրութիւնն ունեցող դարպասով), կամ գուցէ նրա առջեւում գտնւում էր պրոպիլէյը: Աւելին՝ գուցէ պատկերուած շէնքը մի մեծ համալիրի գլխաւոր բաժանմունքն էր, ինչպէս Դուրա-Եւրոպոսի յիշեալ պալատում[41]: Այս շինութեան պահպանուած մասում կենտրոնական դիրքը յատկացուած է սիւնազարդ (պերիստիլ) բակին, որը երեք կողմից շրջապատուած էր սենեակներով: Բակի կենտրոնում գտնւում էր քառակուսի ջրաւազանը: Այս արդէն ծանօթ յօրինուածքին կից կառուցուած էին երեք խոշոր այուաններ, որոնք բացւում էին դէպի հիւսիս:

Այս նոյն ժամանակ Աշշուրի պալատը կազմում էին գլխաւոր բակի շուրջ չորս կողմից խմբուած մէկական համալիրները, որոնց ճակատները գրաւում էին մէկական այուաններ (աղ. VI, նկ. 5):

Քննուող համալիրներից առաւել ուշ կառուցուած Հատրայի պարթեւական վասալների պալատական-տաճարական համալիրում (աղ. IX, նկ. 3) բակը ծածկուած էր եւ վերածուած այուանի: Նոյն բնակավայրի կենտրոնում գտնուող տաճարական համալիրի գլխաւոր շինութիւնը (աղ. X, նկ. 6) էլ աւելի է յիշեցնում Լուսաւորչի թիկունքում պատկերուած տաճարական շէնքի յօրինուածքը (պեղավայր 2, տաճար 1): Լայնակի զարգացած գլխաւոր սրահի առաջ՝ աջ եւ ձախ թեւերից կանգնեցուած կառոյցները ստեղծում են բակ կամ այուան. ձախակողմեան շէնքը ճակատային կողմից եւ բակից խուլ պատերով մի սենեակ է, որն ուղիղ անկեան տակ հաղորդակցւում էր գլխաւոր սրահին, իսկ աջակողմեանը սրահից մեկուսացուած է եւ մուտքով ուղղուած է դէպի տաճարի ընդարձակ բակը[42]:

Երկու առաջացած թեւերով ու լայնակի ճակատով, սրանց առաջ տարածուած ընդարձակ բակով համալիրները ընդունուած էին նաեւ արեւմուտքում: Ամենայայտնի օրինակներից մէկը ներկայացուած է Պոմպէյում՝ Լուկրեցիոս Ֆրոնտոնի տան մի որմնանկարի վրայ (Ք. յ. մօտ 30 թ.): Այստեղ պատկերուած է ընդարձակ հռոմէական կալուածքից մի տեսարան[43]:

Քննարկուող տաճարի մանրամասների եւ ընդհանուր յօրինուածքի հարցում կարելի է ներգրաւել նաեւ Արմաւիրի հնագիտական տուեալները (աղ. X, նկ. 1 եւ 2)՝ նրա միջնաբերդի հարաւային ստորոտին կանգնեցուած մեծ ժայռերից մէկը. սրա վերին մակերեսին ինչ-որ մանրակերտ է, հաւանաբար՝ Արմաւիր քաղաքի միջնաբերդը, որի վրայ պատկերուած են զոյգ աստիճաններ եւ զանազան պարսպապատ շէնքեր[44]: Այս օրինակը կարող է վկայել, որ քննարկուող տաճարը կամ, աւելի ճիշտ, նրա մի տեսանելի մասը արտաքինից շրջապատուած էր լինելու պարսպով[45]:

---

38 **Ю. М. Гагошидзе**, *Раскопки храма II в. до н. э. Дедоплис Миндори (восточная Грузия)*,- Краткие сообщения института археологии (КСИА), М., 1977, N 151, с. 102-108, рис. 1; *Древнейшие государства Кавказа и Средней Азии*, т. 8, с. 82, табл. XL.A на с. 154.

39 **A. Falkenstein,** *Topographie von Uruk. Uruk zur Seleukidenzeit*, Leipzig, 1941, s. 2, 30; **M. Rostovtzeff,** *Seleucid Babylonia: Bullae and Seals of Clay with Greek Inscriptions*,- Yale Classical Studies, vol. III, New Haven, 1932, p. 7; **Г. А. Кошеленко**, *Культура Парфии*, М., 1966, с. 146-147, рис. на с. 147.

40 **W. Andrae, H. Lenzen**, *Die Partherstadt Assur*, Leipzig, 1933, s. 764-67, 73-74; **C. Hopkins**, *The Parthian Temple*,- Berytus, vol. VII, p. 3-4; **Г. А. Кошеленко**, *Культура Парфии*, с. 166-168, рис. на с. 166 и 167.

41 **Г. А. Кошеленко**, *Культура Парфии*, с. 136, рис. на с.137.

42 **Г. А. Кошеленко**, *Культура Парфии*, с. 170-175, рис. на с.171, 173.

43 **Ann Powell**, *The Origins of Western Art*, London, 1973, p. 184, Pl. 177. կայսերական շրջանի Հռոմում բակը երեք կողմից շրջապատող շէնքի բազմաթիւ օրինակներ են յայտնի տիպային վիլլաներից, ինչպէս նաեւ՝ այնպիսի մոնումենտալ համալիրներից, ինչպիսին, օրինակ, Հադրիանոսի վիլլան է Հռոմի մօտ՝ Տիտլիում: Սակայն այս հռոմէական օրինակները ե՛ւ ներքին բաժանմունքներով, ե՛ւ գործառոյթով հեռու են Մերձաւոր Արեւելքի տաճարներից:

44 **К. В. Тревер**, *Очерки по истории культуры древней Армении (II в. до н. э. - I в. н. э.)*, с. 115, рис. 22, табл. 68.

45 Հետաքրքիր է, որ վաղ միջնադարի հայկական միանաւ բազիլիկ եկեղեցիներում (նկ. 049) լայնակի զարգացման նշաններ պահպանած կա-

© National Library of Armenia

Ուշագրաւ է հին Արմաւիրի գագաթին՝ բարձր հարթակի վրայ, գտնուող տաճարական շինութիւնը: Նրա հիւսիսային կողմից՝ կից աւելի ցածր հրապարակում, «փառռակու» կոչուած շէնքում[46], պեղուած են երկու մոնումենտալ պիլոններ[47]: Սրանք նման են Տիգրիսեան Սելեւկիայի պարթեւական դարաշրջանին վերաբերող երկրորդ տաճարի ճակատային մասում վեր խոյացող զոյգ պիլոններին[48]: Դրանք

էլ աւելի համահունչ են Դուրա-Եւրոպոսի՝ Ք. ա. Ա. դարի կէսերին վերակառուցուած Արտեմիսի տաճարին[49]: Պերիստիլ բակում գտնուող ուղղանկիւն տաճարի մուտքի առաջ կանգնեցուած է երկու հսկայ պիլոն:

Այժմ կարելի է փորձել ներկայացնել մանրանկարում բերուած շինութեան հնարաւոր տարբերակը: Հարկաւոր է նկատի ունենալ, որ մանրանկարում պատկերուած է շէնքի միայն մի մասը. թէ ինչ յօրինուածք է ունեցել այն հակառակ կողմից եւ թէ ինչ այլ կառոյցներով է շրջապատուած եղել, մնում է միայն ենթադրել:

Լուսաւորչի թիկունքում պատկերուած մեհեանը յոյժ կարեւոր վկայութիւն է հին Հայաստանի տաճարական տիպերից մէկի վերաբերեալ, որն անընդհատ շղթայով ձգւում է դէպի անտիկ աշխարհի, աքեմենեան եւ ուրարտական տաճարական-պալատական շէնքերը, պաշտամունքային շինութիւնները, խեթա-սիրիական բիթ-հիլանի կառոյցը, Միջագետքի հնագոյն տաճարները՝ միջնորդուած ձեւով յիշեալ մշակութային արգասիքները եւ դրանց իրացմանն ուղղուած շինարարական աւանդոյթները փոխանցելով յաջորդ դարաշրջաններին, միաժամանակ հարազատ մնալով տեղական հիմքերին:

Ինչպէս յայտնի է, աշխարհիկ ու պաշտամունքային ճարտարապետութիւններն աշխարհի բոլոր երկրներում միշտ էլ փոխազդեցութեան մէջ են գտնուել, իսկ այս երկուսի հիմքը եղել է հէնց ժողովրդական բնակարանը: Ելնելով սրանից՝ հարկ ենք համարում անդրադառնալ եւս մէկ հետաքրքիր զուգահեռի, որը, լինելով աշխարհիկ շինութեան օրինակ, լաւագոյնս

ողոցները կցակառուցուած են գերազանցապէս հարաւային՝ արեւահայեաց կողմից:

46 Թէ որքանով է ընդունելի այս բացօթեայ կառոյցին նման պայմանական անուն տալը եւ որքանով է այն համապատասխանում Միջագետքից յայտնի փառռակու տիպի շէնքերին, մի առանձին խնդիր է, որը դուրս է այս յօդուածի շրջանակներից:

47 **Գ. Տիրացեան, Ի. Կարապետեան**, *Արմաւիրի պեղումները (1991-1992 թթ.)*,- Հայաստանի Հանրապետութիւնում 1991-1992 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդիւնքներին նուիրուած գիտական նստաշրջան, զեկուցումների թեզիսներ, Երեւան, 1994, էջ 29-30: Մոնումենտալ պիլոն (տաճարական աշտարակ) էր գտնւում Էջմիածին քաղաքից 4 կմ հարաւ՝ վաղ բրոնզի դարին վերաբերող Մոխրաբլուր հնավայրի կենտրոնական հրապարակում: Ք. ա. III հազ. առաջին քառորդին վերաբերող այս տուփի տափակ սալերից կառուցուած ուղղանկիւն յատակագծով աշտարակի վրայ կանգնեցուած էր մոնոլիտ խոշոր զոհասեղան (3,9մ երկարութեամբ եւ 0,7-1մ լայնութեամբ): Կառոյցը գոյատեւել է երեք շինարարական փուլերում: Նրա գագաթը աստիճանաբար բարձրացւում էր վեր՝ հրապարակի մակերեւոյթի վրայ նոր հորիզոն աւելացնելուն զուգընթաց: Մօտ 6-10 մ բարձրութեամբ աշտարակը սկզբում ունէր 5,4 մ երկարութիւն, 4,5 մ բարձրութիւն, ապա՝ երկու վերակառուցումներից յետոյ, արդէն ստացաւ 7,4 մ երկարութիւն եւ 5,5 մ լայնութիւն: Տե՛ս **Գ. Ե. Арешян, К. К. Кафадарян**, *Рождение монументальной архитектуры на территории Армении (первая половина III тысячелетия до н.э.)*,- Памятники культуры. Новые открытия 1974 г., Ежегодник, М., 1975, с. 397-403; *Հայկական ճարտարապետութեան պատմութիւն*, հտ. 1, էջ 66, աղիւսակ 4դ՝ էջ 37-ում:

48 **R. H. McDowell**, *The Excavations at Seleucia on the Tigris*,- Papers of the Michigan Academy of Science, Arts and Letters xviii, Ann Arbor, 1933, p. 108; **W. Van Ingen**, *Figurines from Seleucia on the Tigris*, Ann Arbor, 1939, p. 5, ref. 2; **Г. А. Кошеленко**, *Культура Парфии*, с. 162, рис. на с. 161.

49 **F. E. Brown**, *Discoveries in the Temple of Artemis Nanaia. The Excavations at Dura-Europos*,- Preliminary Report of 6th Season of Work, New haven, 1936, p. 411.

ներկայացնում է ուշհռոմէական դարաշրջանի եւ վաղբիւզանդական շրջանի ճարտարապետական տենդենցներից մէկի բնորոշ յօրինուածքը՝ տեղ գտած քննուող մանրանկարում: Խօսքը Դուրա-Եւրոպոսի Ք. յ. Գ. դ. առաջին կէսին վերաբերող բնակելի տներից մէկի մասին է: Մեր մանրանկարի կառոյցի նման, այն եւս ունի ներքին բակ, դիմային եւ կողային սենեակներ (աղ. X, նկ. 3)[50]: Համալիրն արտաքին պատով առանձնացուած էր փողոցից: Երկու սիւների վրայ յենուած կամարների տակով կարելի էր մտնել ներքին բակ: Հիւսիսային թեւում գտնւում էին մկրտարանը եւ աստիճանավանդակը, հարաւային թեւում ժողովների սենեակն էր, իսկ դիմացով՝ արեւմուտքից, մի այլ սենեակ: Նշուած սենեակները բակից քիչ բարձր էին, եւ դրանց հանդիսաւոր մուտքերի առաջ կար մի քանի աստիճան:

Ինչպէս Դուրա-Եւրոպոսի նշուած շէնքը, այնպէս էլ հնագոյն տիպի բիթ-հիլանին իւրայատուկ դրսեւորում են ստանում հայկական աւանդական բնակարանի մէջ, որը մանրամասն ուսումնասիրուած է ազգագրական նիւթի հիման վրայ: Հայկական ժողովրդական տունը հազարամեակների ընթացքում ստացել է ընդհանուր յօրինուածքից ճիւղաւորուող երկու զարգացում: Մերձաւոր Արեւելքում որոշիչ կացող էին լինել կլիմայական պայմանները, որոնց ազդեցութեամբ մի դէպքում կառուցւում էր ծածկի տակ առնուած նախասրահ, իսկ միւսում՝ նրա փոխարէն շինուած բակ: Հայաստանում զարգացումներից մէկը տարել է դէպի բաց բակով եւ նրա շուրջ խմբուած կառոյցներով յօրինուածքին՝ բնորոշ բարեխառն կլիմայով

վայրերին, իսկ միւսի կորիզը փակ գլխատնով կենտրոնական դահլիճն էր՝ բնորոշ աւելի խիստ կլիմայական պայմաններում գտնուող նահանգներին:

Մասնաւորապէս՝ մի քանի աստիճանով դէպի լայնակի զարգացած շէնքի պատշգամբ ելնելով՝ կարելի է ձախից եւ աջից տեսնել մէկական կողային սենեակ, իսկ դիմացից՝ աջից դէպի ձախ միմեանց յաջորդող երեք սենեակ. այսպիսին էին տները, օրինակ, Սիւնիքում ընդհուպ մինչեւ Ի. դարի 60-ական թթ.[51]:

Ինչ վերաբերում է բիւզանդական մանրանկարի վրայ պատկերուած շէնքին, ապա նրա ամենամօտ ազգագրական զուգահեռը հանդիպում է Բարձր Հայքի, մասնաւորապէս՝ Էրզրումի մերձակայքի հայկական ժողովրդական տներում: Նրանք սովորաբար բաղկացած են հինգ հիմնական մասից. կենտրոնում բակն է կամ շուաքը (1), բակից դէպի ձախ՝ թոնրատունը (3) եւ մառանը (4), իսկ նրանցից ներս՝ տունն է կամ, աւելի ճիշտ, կանացի բաժանմունքը (2): Նոյն բակից աջ գոմն է եւ նրա մի մասում՝ բարձր յատակով ու միջնորմով կամ վարագոյրով անջատուած տղամարդկանց սենեակը՝ օդան (5): Ձախ եւ աջ բաժանմունքների ետեւում եւ բակի դիմաց մի շարքով շարուած են ամբարները եւ ուրիշ սենեակներ[52]: Ընդ որում՝ դժուար չէ նկատել, որ հայկական տունը որոշակի ընդհանրութիւններ ունի յունական աւանդական տան՝ մեգարոնի եւ յատկապէս՝ հռոմէական տան՝ ատրիումի հետ:

Վերջին տասնամեակներին ի յայտ եկած Հողմիկի անտիկ տաճարական համալիրը (աղ. X, նկ. 4 եւ 5) հարուստ է տարբեր յօրինուածք ունեցող տաճարնե-

50 Քրիստոնէական այս շէնքը գտնւում էր Դուրա-Եւրոպոսի հարաւարեւմտեան եզրին՝ Zeus Kyrios–ի տաճարի հարեւանութեամբ. *Ancient Civilizations*, edited by Hugh Bowden, New York, 2002, p. 117:

51 **Ն. Պապուխեան**, *Սիւնիքի ժողովրդական ճարտարապետութիւնը*, Երեւան, 1972, էջ 86-87:

52 **Խ. Սամուէլեան**, *Հին Հայաստանի կուլտուրան*, հտ. II, Երեւան, 1941, էջ 203:

© National Library of Armenia

րով: Սրանցից մեր քննարկման առարկային բաւական մօտ է 4-րդ տաճարական շինութիւնը: Հարաւային կողմից՝ լայնակի զարգացած այս շէնքի կենտրոնական մասը տրամադրուած է ներքին բակին, որը երկու կողմերից՝ աջից ու ձախից, սահմանափակուած է զանգուածեղ ու լաւ մշակուած կանոնաւոր քարերով կառուցուած մէկական պատով: Բակում՝ աջից պատի առաջ, դրուած է քարերով պատրաստուած քառակուսի կրակարանը, իսկ ձախից հսկայ քարերով շարուած լայն հարթակներ են՝ արդէն զոհաբերուած կենդանիների մասերը դնելու համար: Նոյն ներքին բակի ճակատին՝ քարէ յատակով ծածկուած շինութեան արտաքին պատի օրթոստատների (կողի վրայ դրուած քարերի) մէջ, փորուած են անցքեր՝ զոհաբերուող կենդանիներին նախապէս կապելու համար: Այս բակը եւ նրանից ներս՝ դէպի հիւսիս, գտնուող յիշեալ օրթոստատներով սահմանափակուած սրահը երկու կողմից առնուած են շէնքերի մէջ. աջից կառուցուած են միջանցք եւ աղօթասրահ, իսկ ձախից՝ մի այլ ուղղանկիւն սենեակ: Սրահի շուրջ խմբուած այս շէնքը արեւելեան ճակատից՝ դէպի միւս ընդարձակ բակին նայող տաճարական համալիրի գլխաւոր շէնքերի կողմից, եւս երկու թեւերից առնուած է ընդհանուր ճակատից դէպի դուրս մղուած կառոյցների մէջ[53]:

Մանրանկարի վրայ պատկերուած շէնքի նոյնացման համար էական կարող են լինել վերը նկարագրուած դեկորի մանրամասները, այդ թւում նաեւ՝ ատլանտների պատկերները: Աշշուրում պարթեւական դարաշրջանում սիւների խոյակները տեսքով յոնիական են, սակայն խիստ պարզունակ: Միջագետքում շէնքի ճակատին տեսնում ենք նաեւ վերադիր սիւներ, որոնք պատի հարթութիւնը բաժանում են հատուածների[54]: Հատրայում բազմայարկ շէնքի ճակատին դրուած որմնասիւներն ամբողջական վեր են ելնում ներքեւից մինչեւ շէնքի վերնամասը՝ հատելով յարկաբաժինների քիւերը: Սակայն Աշշուրում իւրաքանչիւր յարկին վերադրուած սեան վերեւում կանգնեցուած է մի ուրիշ սիւն, ինչպէս Լուսաւորչի մանրանկարի վրայ: Հատրայում շէնքերը յագեցած են հելլենիստական մոտիւներով: Առկայ են կորնթոսեան խոյակներ, ականթներ՝ որմնասիւների վրայ: Լուսաւորչի թիկունքում պատկերուած տաճարը իր ճակատով բաւական նման է Աշշուրի շէնքերին, սակայն Հատրայի շինութեանը մերձենում է երկու յարկերում ունեցած խուլ լուսամուտներով եւ յունահռոմէական ազդեցութեան տակ ներկայացուած ֆրիզների առատութեամբ: Ընդ որում՝ ինչպէս Հատրայում, արեւմտեան ազդեցութիւնը մանրանկարում պատկերուած տաճարի վրայ երեւում է միայն դեկորի մէջ: Հատրայի պալատներում անտիկ էլեմենտների ներթափանցումը չի շօշափում յօրինուածքային սկզբունքները[55]: Հաւանաբար սրա պատճառն այն էր, որ տեղական պաշտամունքային առանձնայատկութիւնները պահանջելու էին շէնքի համապատասխան յօրինուածք: Տիգրիսեան Սելեւկիայում վերադիր յոնիական սիւներն իրար են միացուած խուլ կամարներով, մինչդեռ Լուսաւորչի թիկունքում պատկերուած տաճարում առկայ է միայն արխիտրաւային լուծում, իսկ այստեղ երեւացող խուլ կամարակապ կեղծ

53 **H. P. Hakobyan**, *Archaeological Excavations of Ancient Monuments in Armenia 1985-1990*,- Ancient Civilizations vol. 1, 2, Leiden: E. J. Brill, 1994, p. 169-195; **Hayk Hakobyan**, *Le complexe cultuel antique de Hoghmik –IIe- IIIesiècles après J.-C.*,- Dans les montagnes d'Arménie.- Musée archéologique de Saint- Raphaël – Musée départemental dcs Antiquités – Rouen, 2007, p.121-123.

54 **Г. А. Кошеленко.** *Культура Парфии*, с. 162, рис. на с. 139-140.

55 Նոյն տեղում, էջ 162, 177-րդ էջի նկարը:

լուսամուտները ֆունկցիոնալ դեր չեն կատարում:

Ինքնին հետաքրքիր են քննարկուած այն շէնքերը, որոնք ունէին լայնակի զարգացում եւ գլխաւոր սրահի երկու կողմերից կցակառուցուած էին սենեակներով կամ աշտարակներով: Հին Արեւելքին, մասնաւորապէս՝ Միջագետքին եւ ուրարտական ու անտիկ դարաշրջանների Հայաստանին բնորոշ էին կոմպլեքսային տաճարները՝ նուիրուած երկու կամ աւելի աստուածութիւնների[56]: Ամենայն հաւանականութեամբ, հէնց նշուած եռամաս շէնքերը կարող էին լինել այն տաճարների շարքում, որոնք նուիրուած էին մի քանի աստուածութեան: Հայաստանի հնագոյն տաճարական կենտրոններից մէկում՝ Աշտիշատում, օրինակ, գրաւոր աղբիւրները յիշատակում են Անահիտին, Վահագնին եւ Աստղիկին նուիրուած տաճարներ[57]: Գուցէ սրանք առանձին կանգնած շէնքեր էին: Սակայն հետաքրքիր է, որ Աստղիկի տաճարը Աշտիշատում Ագաթանգեղոսը կոչել է «Սենեակ Վահագնի»: Հայերէնում «սենեակը» ունի մի քանի նշանակութիւն, մասնաւորապէս՝ բնակարան, դանձարան, ինչպէս նաեւ՝ հարսնացու: Այս առումով, շատ հաւանական է, որ Վահագնի տաճարի ներսում բաժանմունք-սենեակներից մէկը յատուկ նուիրուած էր Աստղիկին: Միջագետքի անտիկ տաճարները դիտարկելիս Գ. Ա. Կոշելենկոն նկատել է, որ տաճարական շէնքերում, որոնք նախասենեակից ներս ունէին կողք կողքի լայնակի շարուած երեք սենեակներ, կենտրոնական սենեակը պատկանում էր տաճարի գլխաւոր աստուածութեանը, եւ այստեղ էր դրուած նրա պաշտամունքային պատկերը: Իրենց հերթին՝ եզրային սենեակները կրում էին σύνναοι θεοί պատկերները[58]: Հին յունարէնում σύν-ναος նշանակում է ունենալ ընդհանուր տաճար, պաշտուել նոյն տաճարում, իսկ συν-ναίω նշանակում է ուղեկցել, կողակցել, ապրել միասին[59]: Հայերէն «սենեակ»-ը Ագաթանգեղոսի

56 Բագբարտու աստուածուհին երկրպագում էր Մուսասիրում (այժմ աւելի ընդունուած է արտասանել Մուծաիր – Հ. Ց.)՝ Խալդիի տաճարում, եւ սրա մասին են վկայում ասորեստանեան սեպագրերը. 1) Սարգոն Բ.-ն վկայում է հետեւեալը. «Իմ վստահելի մարդկանց՝ իմ հրամանատարներին, ես ուղարկեցի Խալդիի՝ նրա [Ռուսա Բ.-ի - Հ. Ց.] աստծոյ տաճարը, եւ Բագմաշտուին՝ նրա աստուածուհուն, ի թիւս նրա տաճարի ամէն կարգի բազմաթիւ հարստութիւնների... երկու զոհասեղանի, աստուածութեան հանդերձանքի 14 զանազան տիպի գոհարների, Խալդիի եւ նրա կնոջ՝ Բագմաշտուի թանկարժէք իրերի», վերցրի աւար (տե՛ս **И. М. Дьяконов**, *Ассиро-вавилонские источники по истории Урарту* (=АВИУ),- Вестник древней истории, 1951, №2, § 49, фрагмент № 367, с. 332 եւ դիտող. 98, հմմտ.՝ Вестник древней истории, 1951, №3, § 51, с. 208). 2) Միւս հատուածներում նոյն Սարգոնը նշում է. «Մուսասիրցի Ուրզանայից, Խալդիին՝ նրա աստծուն, եւ Բագմաշտուին՝ նրա աստուածուհուն, նրա պալատի բազմաթիւ ունեցուածքի հետ միասին... եւս առեւանգեցի» (տե՛ս АВИУ.- Вестник древней истории, 1951, №2, § 49, фрагмент № 415, с. 333). 3) «...Ուրզանային՝ Մուսասիրի արքային, իր [ընտանիքով հանդերձ ?], Խալդի աստծուն եւ [նրա աստուածուհի] Բագմաշտուին եւս միացրի աւարին...» (տե՛ս АВИУ.- Вестник древней истории, 1951, №3, § 52, с. 208): Սրա մասին տե՛ս նաեւ **Ս. Հմայեակեան**, *Ուրարտական Իւարշայ աստուածութեան մասին*,- Աշխատութիւններ Հայաստանի պատմութեան պետական թանգարանի, հտ. VII, Երեւան, 1981, էջ 20:

57 «...Ութերորդ պաշտօն հոչակաւոր, անուանեալն Վիշապաքաղն Վահագնի, յաշտից տեղիք թագաւորացն Հայոց Մեծաց, ի սնարս լերինն Քարքեայ, ի վերայ գետոյն Եփրատայ, որ հանդէպ հայի մեծի լերինն Տաւրոսի, որ եւ անուանեալ ըստ յաճախաշատ պաշտաման տեղեացն՝ Ցաշտիշատ: Զի յայնժամ դեռ եւս չէն կային երեք բագինք ի նմա. առաջին՝ մեհեանն Վահեւանեան, երկրորդն՝ Ոսկեմօր Ոսկեծին դից, եւ բագինն իսկ յայս անուն անուանեալ Ոսկեհատ Ոսկեմօր դից. եւ երրորդ՝ մեհեանն անուանեալ Աստղկան դից, Սենեակ Վահագնի կարդացեալ, որ է ըստ յունականին Ափրոդիտէ». տե՛ս **Ագաթանգեղեայ** *Պատմութիւն Հայոց*, Տփղիս, 1909, հատուած 809:

58 **Г. А. Кошеленко**, *Культура Парфии*, с. 162, рис. на с. 173.

59 *Древнегреческо-русский словарь*, М., 1958, т. II, с. 1574.

© National Library of Armenia

մօտ համազօր է հէնց յունարէնի այս իմաստին, եւ Աստղիկ աստուածուհու համար պատմիչի տուած «սենեակ Վահագնի» բնորոշումը պէտք է թարգմանել «Վահագնի կողակից» կամ «տաճարակից» նշանակութեամբ:

Մանրանկարի վրայ պատկերուած շէնքը, որ նոյնացւում է Միհրի տաճարին, ըստ երեւոյթին, պատկանում էր հէնց այս աստուածութեանը, սակայն կից թեւերում գտնուող սենեակները կարող էին վերն ասուածի հիման վրայ պատկանել այլ աստուածների, օրինակ՝ Անահիտին եւ/կամ Աստղիկին: Առաւել եւս՝ Հայոց արքայական տան հովանաւոր աստուածները մի քանի դինաստիաների ընթացքում անփոփոխ մնում էին Միհրը եւ Անահիտը, իսկ պաշտօնական պանթէոնը գլխաւորում էր Արամազդ-Անահիտ-Միհր եռեակը[60]: Միաժամանակ հին աշխարհում, այդ թւում նաեւ՝ Հայաստանում, բաւական տարածուած էր ինչպէս արական-իգական, այնպէս էլ մէկ արական եւ զոյգ իգական աստուածութիւններից կազմուած եռեակների պաշտամունքը[61]:

Մենք առայժմ աւելի հակուած ենք մանրանկարի տաճարը համարել Միհրին եւ յետոյ միայն նրա կողակիցներին նուիրուած մեհեան-տաճար: Նկարի վրայ տաճարի հարթ տանիքը եւս շատ խորհրդաւոր է: Տուեալ համատեքստում յիշարժան է հին հայերի կողմից գործածուած «արեգակնակ» հասկացութիւնը, որին անդրադարձել է նշանաւոր հայագէտ Գ. Տէր-Մկրտչեանը՝ Ն. Մառին 1890 թ. հոկտեմբերի 5-ին հասցէագրուած իր նամակում: Ահա հայագէտի նկատառումները. «...Խորենացու մէջ, Շամիրամի գլխում, կայ մի «Արեգակնակ» բառ, որ շատ վատ եւ անճիշտ է հասկացուել մինչեւ այժմս: Ըստ իս՝ «արեգակնակ» նշանակում է տան կտուրը, որտեղից առաւօտները երկրպագում էին արեգակին: Այդ մտքով յիշւում է եւ «արեգակնատես» ապարանք կամ «վերին երես յարկաց», այն է՝ տանիք, Աժդահակի երազի մէջ...»[62]:

Մանրանկարում երեւացող եւ հին Մերձաւոր Արեւելքում յայտնի՝ վերոյիշեալ կողային սենեակների ֆունկցիոնալ յետադիմութիւնը փորձ է արուած բացատրել ուղեկից աստուածութիւնների նշանակութեան թուլացումով եւ կենտրոնական աստուածութեան իրաւասութիւնների աւելի ուժեղացումով: Էլ աւելի կարեւոր է, որ ենթադրւում է, թէ այս տիպի եռամաս տաճարների առաջացման կենտրոնը Դուրա-Եւրոպոսն է՝ Սիրիայի յարակից մարզերի հետ միասին[63]: Այն տաճարները (մասնաւորապէս՝ Հատրայի I տաճարը), որոնցում կողային սենեակների մուտքերն արդէն չունեն որեւէ նշանակութիւն, համարւում են Դուրա-Եւրոպոսի տիպի տաճարների յետագայ զարգացման կամ, աւելի ճիշտ, յետադիմութեան արդիւնք:

Այս արդէն ուշ անտիկ դարաշրջանի տաճարների թուին կարող ենք դասել նաեւ Մենոլոգիայի մանրանկարում պատկերուած հայկական տաճարը: Ելնելով նրա պատկերագրութիւնից՝ կարելի է ընդունել, որ այն նուիրուած էր Միհրին[64], սակայն

60 **Г. А. Тирацян**, *Вопросы преемственности официального культа в античной Армении*.- Вестник Общественных наук, 1985, N 10, с. 58-65.

61 Աստուածութիւնների բաժանումը արականի եւ իգականի խիստ պայմանական է եւ ընդամէնը կարող է վերաբերել նրանց անտրոպոմորֆ պատկերների մեկնութեանը:

62 Գ. Տէր-Մկրտչեան, *Հայագիտական ուսումնասիրութիւններ*, գիրք Բ, աշխատասիրութեամբ պրոֆ. Պ. Հ. Ցակոբեանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարան, 1998, էջ 470:

63 **Г. А. Кошеленко**, *Культура Парфии*, с. 162.

64 Կ. Վ. Տրեւերը մանրանկարում պատկերուած հայկական տաճարը վերագրել է Միհրին՝ ոչ միայն ելնելով նրա պատկերագրութիւնից, այլեւ այն հանգամանքից, որ, ի տարբերութիւն արեւմտեան գետնափոր միթրէումների, Հայաստանում զարգացման բաւական երկար ուղի անցած յայտնի յօրինուածքով տաճարի վաղմիջնադարեան կամ աւելի հին մի վերարտադրութիւն,[65] որն էլ փոխադրուել է մանրանկարի վրա որպէս հին Հայաստանի հեթանոսական տաճարի ոչ միայն իրատեսական, այլեւ բնորոշ մի պատկեր:

միաժամանակ հարկ ենք համարում աւելացնել, որ տաճարում տեղ էր յատկացուած նաեւ Անահիտին, գուցէ եւ՝ Աստղիկին էլ: Սա է հաստատում նաեւ հին հայերէն «մեհեան» պոլիսեմանտիկ բառը, որը մի կողմից բառացի նշանակում է Միհրի տաճար, իսկ միւս կողմից՝ դարձել է յատուկ գոյական՝ նշանակելու համար ընդհանրապէս ցանկացած հայ հեթանոսական աստուածութեանը նուիրուած տաճար:

Վերը բերուած տուեալները ցոյց են տալիս, որ Մենոլոգիայում պահպանուած մանրանկարի անանուն հեղինակը ոչ թէ զարկ է տուել իր վառ երեւակայութեանը, այլ հնարաւորութիւն է ունեցել տեսնելու ուշ անտիկ դարաշրջանում Հիւսիսային Սիրիայում, Միջագետքում եւ Հայաստանում դրանք կարող էին ունենալ նաեւ այլ տեղադրութիւն: Միհրի պաշտամունքը Հայաստանում ձեւաւորուել ու զարգացել էր իր սեփական ուղիներով, որոնք տարբերւում էին այն ձեւերից, որոնք Միթրայի ուսմունքը ընդունել էր Արեւելքի միւս երկրներում եւ առաւել եւս՝ Արեւմուտքի երկրներում: Ինչպէս յայտնի է, Դուրա-Եւրոպոսի միթրէոնը եւս ամբողջովին վերգետնեայ շէնք էր: Մի ճարտարապետական առանձնայատկութիւն, եթէ սա պատահական զուգադիպութիւն չէ, ընդհանուր է Արեւելքում մեզ յայտնի Միթրա-Ապոլլոնի երեք տաճարների համար. այն, որ նրանք ունեն անսովոր թեք ֆրոնտոն (крутой фронтон), որի բարձրութիւնը կազմում է նրա լայնքի մէկ հինգերորդ մասը: Նման ենթադրութեան համար նկատի է առնուել Գառնիի տաճարը, իսկ յետոյ բազմիցս Գառնիի տաճարի հետ համեմատելու համար նկարագրուած Ապոլլոնի տաճարը Սագալասում (**Ch. Lanckoronski, C. Niemann et E. Petersen,** *Les villes de la Pamphylie et de Pisidie*, Paris, 1893, vol. II, p. 157, fig. 123, tab. XXV) եւ Միթրայի տաճարը Կրեմնայում (նոյն տեղում էջ 179): ա) չափից դուրս բարձր ֆրոնտոնը (որպէս ճարտարապետական առանձնայատկութիւն), բ) տաճարը, համաձայն ատլանտի առկայութեան, կապուած էր Միթրայի պաշտամունքի հետ (սիմետային առանձնայատկութիւն): Տե՛ս **К. В. Тревер,** *Очерки по истории культуры древней Армении*, с. 66-67, 90-91.

65 Թէ որտեղ էր կանգնած մանրանկարում պատկերուած այս տաճարը, դեռեւս անյայտ է: Այն կարող էր գտնուել Բագահառիճում՝ Միհրի տաճարական տիրոյթում (մեր աշխատութիւններից մէկում արդէն ապացուցել ենք, որ գլխաւոր Բագահառիճը գտնւում էր Սեպուհ լեռան արեւմտեան կողմում՝ ներկայիս Փեքրիջի մօտ, այլ ոչ թէ Դերջանում, ինչպէս նախկինում սխալմամբ ընդունուած էր), Եկեղեաց գաւառում՝ Անահիտի տաճարական հողերում, կամ էլ մինչեւ Ծապուհ Բ.-ի կործանարար արշաւանքը եղած հին Արտաշատում: Խնդիրը, կարծում ենք, ապագայում հնարաւոր կը լինի լուծել նման տեսական ուղղուածութեան եւ նոր հնագիտական ուսումնասիրութիւնների շնորհիւ:

© National Library of Armenia

Աղիւսակ 1

I, Ակ. 1

I, Ակ. 2



II, Ակ. 2



II, Ակ. 3



II, Ակ. 4

Աղիւսակ 2

II, Ակ. 1

II, Ակ. 5



II, Ակ. 6

III, Ակ. 2

III, Ակ. 3

Աղիւսակ 3

III, Ակ. 1

III, Ակ. 4

© National Library of Armenia

III, գկ. 5



IV, գկ. 3

III, գկ. 6

IV, գկ. 4

Աղիւսակ 4



IV, գկ. 1

IV, գկ. 5



IV, գկ. 2

V, գկ. 2

IV, գկ. 6

V, գկ. 3

Աղիւսակ 5



V, գկ. 1

© National Library of Armenia

V, գկ. 4

23 «Круглый храм» в Старой Нисе. II—I вв. до н. э. Реконструкция



V, գկ. 5

Աղիւսակ 6



VI, գկ. 1



VI, գկ. 2



VI, գկ. 3



VI, գկ. 4



VI, գկ. 5

Աղիւսակ 7





VII, գկ. 1



VII, գկ. 2



VII, գկ. 3



VII, գկ. 4



VII, գկ. 5

© National Library of Armenia



Աղիւսակ 8



VIII, Ակ. 1



VII, Ակ. 6



VIII, Ակ. 2



VII, Ակ. 7



VIII.3



VIII, Ակ. 4



VIII, Ակ. 7



VIII, Ակ. 5



VIII, Ակ. 8



VIII, Ակ. 6

© National Library of Armenia

Աղիւսակ 9



IX, Գկ. 1



IX, Գկ. 2



IX, Գկ. 3

Աղիւսակ 10



X, Գկ. 1

X, Գկ. 2



The Christian building at Dura Europos (above). This is the only surviving example of a building used for Christian ritual activity before the fourth century AD. It was probably constructed in AD 232, and destroyed when the town was sacked in AD 256. From the outside the building would have looked no different from the houses around it, and the room most clearly used for Christian ritual, the baptistry, would not have been visible to those passing in the street. The baptistry contained a font, looking like a large bath, at its western end, and was decorated with scenes from the Hebrew Bible and the Gospels. The large room on the south side of the building had no decorations at all, but its size, and the raised platform at the east end, suggest that it was used for meetings, and perhaps for celebrations of the eucharist. Elsewhere in the Roman Empire, fourth-century churches were built over the remains of substantial houses, and this suggests that before Christianity received the support of the emperors, houses, in particular those of rich patrons, were the usual meeting places for Christian congregations.

X, Գկ. 3

© National Library of Armenia



X, գկ. 4



X, գկ. 5



X, գկ. 6

© National Library of Armenia